

ՀՐԱՏ. ԲԺ. Ա. ԲՈՒՊՈՒՂԵԱՆԻ

368.4

Վ - 56



ԲԱՆԻՈՐԻ

ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Շարունակում է բաժանորդագրութիւն 1909 թ.

Հ Ա Ս Կ Ե Ր

Մանկական պատկերազարդ ամսագրի

Բաժանորդագինն՝ է տարեկան 4 ռ.

Հասցէն՝ Թիֆլիս, Բէհրուժեան փողոց, № 25

Խմբ. հրատ. ԿԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍՍ.ԿԱՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Բաժնեգինը՝ տարին 3 ռ., կէս տար.՝ 1 ռ. 50 կ.

Հասցէն՝ Թիֆլիս:

Նոր գիրք

Ե. Թ Ո Փ Ջ Ե Ա Ն Ի

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻԻՐՔԻԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Գինն է 60 կ.

Մամուլի տակ է նոյն հեղինակի «Գիւղացիական ճիւղթիւնները» գիրքը:

368.4 ՀՐԱՏ. ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ

4-56

ՆՅ

ԲԱՆԻՈՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ԴԵՊՔՈՒՄ

(Գործարանական բժշկութիւն և ապահովագրութիւն)

Բժ. Ն. Ա. Վիզգորչիկ

1003
13138

1. Մանուկ և հանրային բժշկութիւն: — 2. Գործարանային բժշկութիւն: — 3. Քաղաքային և զեմաստիջական բժշկութիւն: — 4. Հիւանդ բանւորի կարիքները: — 5. Բանւորի ապահովագրութիւնը: — 6. Ապահովագրութեան առաւելութիւնները: — 7. Գերմանական բանւորների ապահովագրութեան պակասութիւնները: — Եզրակացութիւն, նկատողութիւն Պիբոգովիան յանձնաժողովի կողմից: Երկու խօսք հրատարակչի կողմից:

Ս. ՊԵՏԵՐՐՈՒՐԳ

«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻՊ», ՍԱՅԿԻՆ ՓՈՂ. 10
1909

12 AUG 2013

Յ Ա Ռ Ա Չ Ա Ր Ա Ն

Աշխատաւոր ծարդու միակ դրամագլուխը՝ նրա առողջութիւնն է: Զրկելով առողջութիւնից, աշխատաւորը կորցնում է իւր միակ կարողութիւնը և այդ դէպքում — ստիպւած պիտի լինի կամ մեռնել սովից, կամ ողորմութեամբ ապրել: Ահա թէ ինչու, ոչ ոք աշխատաւորի չափ կարիք չունի խնամելու իւր առողջութիւնը: Միւնոյն ժամանակ բանւորները, որոնց ամբողջ բարեկեցութիւնը կախուած է իրանց ոչժից, առողջութիւնից, յաճախ ապրում են այնպիսի պայմաններում, որոնք անընդհատ մաշում ու լափում են այդ առողջութիւնը:

Եթէ սկսէինք թւել այն բոլոր պայմանները, որոնք վնասում են աշխատաւորի առողջութեան, ապա կարիք պէտք է լինէր մանրամասն պատմել նորա կենսապրութիւնը, սկսած օրօրոցից մինչ դէրեզման:

Դեռ ևս մօր արդանդում նա շատ անգամ ստանում է բազմաթիւ հիւանդութիւնների սաղմերը, որոնք չետազաչում թունաւորում և քայքայում են նորա կեանքը: Աշխատանքից և զրկանքներից հիւժւած, թուլացած ծնօղներից չեն կարող

Ճնւել առողջ զաւակներ: Երբ կինը ստիպւած է աշխատելու գործարանում գրեթէ մինչև իւր ծնելու օրը, ապա բնական է, որ աշխարհ կրերէ թոյլ երեխայ:

Ծնւելով թոյլ ու հիւանդոտ, ապազայ աշխատաւորը իւր կեանքի առաջին իսկ օրերից, սկսում է զրկանքներ կրել: Նա ամենից առաջ չունի այն բնական կերակուրը, որ բնութիւնը տնօրինել է նորա համար — նա կտրւում է իւր մօր կրծքից, քանի որ մայրը հնարաւորութիւն չունի տանը մնալու և նորան խնամելու:

Սնկանոն կերակրելով և անխնամ մնալով՝ երեխան հիւանդանում է և երկար ժամանակով նորա առողջութիւնը քայքայւում է: Եթէ նա անվտանգ է անցկացնում իւր կեանքի առաջին տարին — ամենավտանգաւորն ամեն մի մարդու կեանքում, — ապա նա այնուամենայնիւ նւաղելով, տրամապիւր է դառնում հեշտութեամբ ընդունելու ամեն տեսակ հիւանդութիւն:

Յետագայում էլ նորան սպասում են նորանոր զրկանքներ: Նորա քնքոյշ մանկութիւնն անցնում է յաճախ խոնաւ ներքնայարկերում, փոշու և ցեխի մէջ, ուր չեն թափանցում արևի կենսատու հառագայթները: Ինչ ևս մանուկ հասակում նա ծանօթանում է սովի և ցրտի հետ: Ծնողները ստիպւած լինելով ամբողջ օրեր անցկացնել զբոսում՝ աշխատանքի վերայ, թողնում են նորան տանը, բաղդի քմահանուքին: Զուրկ հսկողութիւնից, խնամքից, մայրական հոգատար աչքից, նա

ենթարկւում է ամեն տեսակ վտանգների — մրսելու, անդամալուծ դառնալու, մեռնելու: Ինչ ևս նորա մարմինը փոքր ինչ չ'ամբապնդւած, կարիքը նորան քշում է զէպ աշխատանք, — գործարանում և արհեստանոցներում:

Տարեկան հասակից նա կամովին իրա վերայ է առնում այն շղթան, որն այնուհետև նորան իր ճիրաններում է պահում մինչև կեանքի վերջին շունչը: Խեղդուկ և փոշոտ արհեստանոցում, գործարանի թունաւորւած օդում է անցնում նորա պատանեկութիւնը, երիտասարդութիւնը, այստեղ է դառնում նա չափահաս և այստեղ էլ վաղաժամ ծերանում: Աշխատանքի ծանր պայմանները միացած նորա ամբողջ կեանքի ծանր պայմանների հետ, անընդհատ քայքայում են նորա ոյժերը:

Եւ գործարանի վնասակար մթնոլորթ, և՛ երկար բանւորական օր, և՛ դիշերային աշխատանք, և՛ աննշան աշխատավարձ՝ կէսկուշտ ստամոքսով և զղւելի բնակարաններով, — դոքա բոլորը միացած վնասում են նորա առողջութեանը, խլում են նորանից իւր միակ հարստութիւնը, որի վերայ է յենւած իւր ամբողջ բարեկեցութիւնը:

Եւ երբ մեր առաջ տեսնում էք աշխատաւորին, որ դեռ նոր մտած իւր 40 տարեկան հասակը ծերացել է՝ վաղաժամ սպիտակած զլխով, որի դէմքը ծածկւած է կանուխ կնճիռներով և մէջքը կռացել է ոչ թէ ատրիների ծանրութեան տակ, այլ ուժից վեր աշխատանքի բեռի ներքև, — ապա դուք կարող էք ասել, ահա մի մարդ, որից

խլել են իւր վերջին կարողութիւնը — առողջութիւնը:

Երկար տարիներ աշխատաւորներն տնտեսական էին իրենց ծանր կացութեան: Նոցա միտքը չէր պարզաճ զիտութեան լոյսով: Հիւանդութեան և մահուան վերայ նոքա նայում էին որպէս Աստուծոյ պատիժների վերայ, ուղարկած իրանց մեղքերի համար, և նոքա անկարող էին հասկանալու իրանց շրջապատող իրականութիւնը: Բայց կամաց-կամաց զարգանալով ու զիտակցելով սկսեցին հասկանալ, որ չի կարելի ամեն տեսակ նեղութեան և զրկանքների մէջ միայն Աստուծոյ պատիժը տեսնել, և որ իրենց առողջութիւնը քայքայող աշխատանքի և կեանքի պայմանները կարելի է և պէտք է փոխել դէպի լաւը:

Գիտութիւնն եկաւ այդ դէպքում օգնութեան և ցոյց տւեց, թէ ի՞նչը ներկայումս ամենից շատ մաշում է աշխատաւորի առողջութիւնը և ի՞նչը, ուրեմն, պէտք է ննթարկել փոփոխութեան: Կրճատումն բանւորական օրւայ, արդելումն զիշերային աշխատանքի, սահմանափակումն կանանց և անչափահասների աշխատանքի, աշխատավարձի յաւելումն, բարելաւում աշխատաւորական բնակարանների, խիստ հսկողութիւն գործարանների առողջապահական զրութեան, — ահա գլխաւորներն այն միջոցներից, որոնցով կարելի է կռիւ մղել աշխատաւորների հիւանդութեան և մահուան դէմ, որոնց շնորհիւ կարելի է շատ հի-

ւանդութիւնների առաջն առնել և փրկել միլիօնաւոր աշխատաւորների կեանքը:

Բայց մինչ այս ձեռնարկութիւնների իրականանալը, անհրաժեշտ է մտածել նոցա բաղդի մասին, որոնք կորցնելով իրենց առողջութիւնն, անընդունակ են դառել աշխատելու: Ի՞նչպէս թեթեւացնել հիւանդ աշխատաւորի դրութիւնը: Ի՞նչպէս կազմակերպել նորա համար ամենալաւ բժշկական օգնութիւն: Ի՞նչպէս ապահովել նորան կարիքից հիւանդութեան ժամանակ, — ահա հարցեր, որոնք հետաքրքիր պիտի լինին ամեն մի, մտածելու ընդունակ, մարդու համար:

Այդ հարցերով էլ մենք կ'զբաղուենք ներկայ գրքովում: Մենք կ'աշխատենք, հետեւապէս, պարզել, թէ ի՞նչպէս պէտք է դրւի բժշկական օգնութիւնը, որպէսզի նորանից անարգել օգուել կարողանան բանւորները և թէ իրենց ընտանիքները, և ի՞նչպէս կազմակերպել, որ աշխատաւորներին հեշտ լինի հիւանդութեան դէպքում ապրել և միւս կողմից աշխատելու ընդունակ մնալ նաև ծերութեան ժամանակ:

1. Մասնաւոր և հասարակական բժշկութիւն.

Հին ժամանակներում, երբ դեռ ևս չկային խոշոր գործարաններ և արհեստանոցներ՝ լի վարձու բանւորներով, երբ ազգաբնակչութեան գլխաւոր

մասը գիւղացիութիւնն էր կազմում — եօրտ կամ ազատ, — հիւանդին տրւելիք բժշկական օգնութիւնը բոլորովին այլ կերպ էր կազմակերպւած, քան այժմ: Այն ժամանակներում բժիշկներ քիչ կային, բժշկելու գիտութիւնը շատ չէր զարգացած, և հասարակ ժողովուրդը մեծաւ մասամբ կառավարւում էր առանց բժշկի: Կային անթիւ, ամեն տեսակի վհուկներ, կախարդներ և ինքնակոչ բժիշկներ, որոնք և պարապում էին հասարակ ժողովրդի ախտերը բուժելով: Նոքա իրենք հաւատում էին իրենց անմիտ արհեստին, տեսակ-տեսակ կախարդութիւնների և խոտերի ոյժին, և խաւար, անկիրթ ժողովուրդն էլ անպայման հետևում էր նոցա:

Եթէ հիւանդն առողջանում էր, ապա այդ վերագրում էին վհուկի արհեստին. իսկ եթէ մեռնում էր՝ ասում էին. այդպէս էր Աստուծոյ կամքը: Գիտական պատրաստականութիւն ունեցող իսկական բժիշկներն այն ժամանակ ապրում էին թագաւորների, իշխանների և մեծ կալւածատէրերի պալատներում և դղեակներում, բոլորովին կտրւած հասարակ ժողովրդից:

Հետզհետէ սկսեցին զարգանալ քաղաքները, սկսեց անել քաղաքային բնակչութիւնը: Քաղաքների բնակիչներն ազատ էին նորտութեան լծից, աւելի հարուստ էին և զարգացած քան գիւղացիք: Իրան համեմատ կախարդական բժշկութիւնն այլ ևս չէր բաւականացնում նորանց և նոքա գիտական բժշկութեան կարիք զգացին: Դրա հետ

միասին զգալի չափով շատացաւ նաև բժիշկների թիւը: Փոքր 'ի շատէ հարուստ քաղաքացիների դաւակներն սկսեցին սիրով ուսումնասիրել բժշկութիւնը, որովհետև բժշկական պարապմունքը մեծ յարգ ունէր և եկամտալից էր: Այդպիսով քաղաքային ազգաբնակչութեան մէջ կամաց-կամաց սկսեց տարածւել իսկական բժշկական օգնութիւնը:

Քաղաքային կեանքն ինչպէս այժմ, նոյնպէս և հնումը, հաստատուած էր վաճառականութեան, առևտրի վերայ: Փողը մեծ դեր էր խաղում քաղաքացու աօրեայ կեանքում: Որքան զարգանում էին քաղաքները, որքան աճում էին առևտրական շրջանառութիւնները, այնքան աւելի և աւելի իշխող էր դառնում փողը: Առ և տուրը ամեն ինչ ապրանք դարձրեց: Բնական էր, որ քաղաքային բնակչութեան տրւելիք բժշկական օգնութիւնն էլ ընդունէր առևտրի բնոյթ, և բժշկական աշխատանքն էլ դառնար ապրանք: Ամեն հիւանդ ինքը պէտք է դտնէր բժիշկ և վարձատրէր նորան: Բժիշկներն սկսեցին ծախել իրենց զբաղմունքն որպէս մանրավաճառ և այդպիսի վաճառքը կոչւեցաւ Մասնաւոր պրակտիկա: Ներկայումս մասնաւոր պրաքտիկան ծայրայեղ չափերի է հասել, և բոլոր երկրներում բժիշկների մեծ մասն ապրում է յատկապէս մասնաւոր պրաքտիկայով:

Սակայն բժշկական օգնութեան այդպիսի կազմակերպութիւնը, երբ իւրաքանչիւր հիւանդ անձամբ գտնելու է բժշկին և վարձատրելու նորան, ունի շատ պակասութիւններ: Նա լաւ է միայն

այն ժամանակ, երբ բժշկական օգնութեան կարիք ունի միայն ազգաբնակութեան ունեւոր մասը: Հարուստ մարդը միշտ էլ ունի միջոց փող չեա ձգելու սև օրւայ համար:

Եւ երբ այդ սև օրը վրայ է հասնում, երբ յայտնւում է հիւանդութիւնը, նա կարող է յեա ծղած փողը գործադրել բժշկւելու համար: Բայց նա, որի ամբողջ կեանքը սև օրերի մի շարան է, — չունի ոչ մի յեա ձգած գումար, չպիտի կարողանայ նաև վարձատրել բժշկին: Աւելին կասեմ. յատկապէս այն ժամանակ, երբ աղքատ մարդը բժշկւելու կարիք է զգում, դառնում է աւելի աղքատ, քան սովորաբար, որովհետև դադարում է աշխատելուց:

Եւ քանի մեծ է բժշկական կարիքը, քանի երկարում ու ծանրանում է նրա հիւանդութիւնը, այնքան աւելի անկարող է դառնում բաւարարութիւն տալու այդ կարիքին, այսինքն վարձատրել բժշկին, դեղեր գնել և այլն: Ահա թէ ինչու մասնաւոր պրաքտիկայի վերայ հիմնւած բժշկական օգնութիւնը ձեռնտու է միայն հարուստների համար, իսկ աղքատները բժշկի գիտական օգնութեան կարիք չեն զգում, քանի որ իրենց ոչժից վեր է, կառավարւում են իրենց միջոցներով կամ կախարդների դեղերով, և անտրտունջ մեռնում:

Աղքատ ազգաբնակութեան միշտ ածող այդ կարիքին բաւականութիւն տալու համար անխուսափելիօրէն պէտք է առաջ դաչ բժշկական օգնութեան այնպիսի կազմակերպութիւն, որը հաստատ-

ւած չի լինի մասնաւոր պրաքտիկայի վերայ: Եւ ահա մենք տեսնում ենք որ զանազան երկրներում տարբեր ժամանակներում իրար չետեւից ծագում են հաստատութիւններ, որոնք նպատակ են դնում ապահովել չքաւոր ազգաբնակութիւնը ծրի բժշկական օգնութեամբ:

Ամենից առաջ հանդէս եկան զանազան բարեգործական հիմնարկութիւններ: Այդ հաստատութիւնները պահւում էին հարուստների զոհաբերութիւններով և օգնութիւն էին հասցնում միայն աղքատներից ամենախեղճերին:

Բայց կուշտ մարդկանց կամաւոր զոհաբերութիւններն երբէք չէին կարող բաւարարութիւն տալ աղքատ հիւանդների հոժ բազմութեանը: Այդ պատճառով բարեգործական բժշկութեամբ կարող էին օգտւել միայն մի բուռն աղքատներ, իսկ բնակչութեան մնացած բազմութիւնը զուրկ էր մնում նորա բարեբար ազդեցութիւնից:

Յիրաւի, ժողովրդական լայն խաւերի ապահովումը բժշկական օգնութեամբ սկսւեց միայն այն ժամանակ, երբ առաջ եկան հանրային բժշկութեան զանազան ձևերը:

Այժմ տեսնենք, թէ ի՞նչ բան է հասարակական կամ հանրային բժշկութիւնը:

Արդէն անունն իսկ ցօյց է տալիս, որ դա մի այնպիսի բժշկական օգնութիւն է, որը հիմնւած է հասարակական սկզբունքների վերայ և ծառայում է մի ամբողջ հասարակութեան կարիքներին: Այդ բնկերութեան հիւանդ անդամը պէտք չունի հրա-

ւերելու վարձով մասնաւոր բժիշկ կամ պառկելու մասնաւոր հիւանդանոցում, — այդ բոլորը պատ-
րաստ կայ ընկերութեան բոլոր անդամների հա-
մար: Որպէս օրինակ կարելի է բերել գործարանա-
կան (Ֆաբրիչնի) բժշկութիւնը:

Նորա կազմութիւնն, երկու խօսքով, այսպէս է: Գործարանն իւր հաշուով վարձում է բժիշկներ և ֆելդշերներ, բաց է անում հիւանդանոց, դեղա-
տուն, զնում է դեղեր, գործիքներ և այլն: Հիւան-
դացած բանւորը կարիք չունի բժիշկ որոնելու.
վերջինս ամեն ըոպէ նորա տրամադրութեան տակ է:
Նոյնպէս բանւորը պարտաւոր չէ վարձատրել
բժշկին նորա այցելութիւնների համար, քանի որ
նա ստանում է ռոճիկ և պարտաւոր է բանւորին
ծրի բժշկել:

Ընթերցողը տեսնում է, որ գործարանային
բժշկութիւնը դրւած է բոլորովին այլ հիմքի, այլ
սկզբունքի վերայ, քան մասնաւոր պրաքտիկան:
Բժշկական մասնաւոր պրաքտիկայի և գործարա-
նային բժշկութեան մէջ իսկոյն կարելի է նկատել
երկու հիմնաւոր տարբերութիւններ: Գործարա-
նային բժշկութեան մէջ բժիշկ որոնելու հոպսն ըն-
կած է ոչ թէ առանձին բանւորի, այլ մի ամբողջ
ձեռնարկութեան վրին, որն ունի բազմաթիւ ան-
դամներ:

Բժիշկն ամեն մի առանձին դէպքում համա-
ձայնութեան է դալիս ոչ թէ առանձին բանւորի
հետ, երբ վերջինս հիւանդանում է, այլ ժառայում
է ամբողջ գործարանին, — պայմանաւորելով նորա

վարչութեան հետ որոշ ժամանակաշրջանի համար:
Միւս տարբերութիւնը նորանումն է, որ բժշկին
վարձատրում են ոչ թէ նոքա, որոնք հիւանդացել
են և դրանով անկարող դարձել աշխատելու, այլ
գործարանատէրը, որն այդ գործի համար նշանա-
կում է գործարանի տւած կեամուտի մի մասը,
այսինքն այն գումարների մի մասը, որ նա ստա-
նում է շնորհիւ բանւորների աշխատանքին: Այդ-
պիսով, կարելի է ասել, որ գործարանական բժշկու-
թեան մէջ տիրապետում է այսպիսի սկզբունք.
բժշկական օգնութեան համար պարտաւոր են վար-
ձատրել բժշկին նորանք, որոնք դեռ ևս առողջ են
և այդ օգնութեան կարիք չունին. իսկ ով հիւան-
դանում է, նա պէտք է ստանայ ծրի:

Հասարակական բժշկութիւնը միակ միջոցն
է, որը կարող է ապահովել ազգաբնակչութեան
լայն խաւերի համար բժշկական օգնութիւն:
Նորա սաղմերը շատ հին են, բայց փոքր 'ի շատէ
մեծ ծաւալ ստացաւ նա միայն անցեալ (19) դա-
րի երկրորդ կիսում, երբ Ռուսաստանում մտցւեց
զեմստովային, քաղաքային և գործարանային բժրշ-
կութիւն, իսկ Արևմտեան-Եւրոպայի մի քանի
պետութիւններում — բանւորների ապահովա-
գրութիւն:

Հասարակական բժշկութեան զանազան ձևերի
ծագելն ու տարածելը բացատրւում է երկու
պատճառներով: Մի կողմից ազգաբնակչութեան
աղքատ մասերը, որ երբեմն անտրտունջ տանում
էին իրենց ծանր խաչը, սկսեցին աւելի և աւելի

պահանջներ յայտնել դէժ չնչին չափերով վայելելու կենսական բարիքներ: Այսպէս, օրինակ, Գերմանիայում բանւորների ապահովագրումը յառաջ եկաւ զլիսաւորապէս բանւորական շարժման ազդեցութեամբ: Ռուսաստանում նոյնպէս գործարանային բժշկութեան զարգացման մէջ պակաս դեր չէ խաղացել բանւորական կռիւր գործարանատէրերի դէմ, աշխատանքի պայմանները բարելաւելու համար:

Միւս պատճառը, որ կրկին մեծապէս նպաստել է հասարակական բժշկութեան լայն ծաւալման, կայանում էր նորանում, որ հարուստ դասակարգերը հակառակ իրենց ցանկութեան, չէին կարող բոլորովին անտարբեր վերաբերել դէպի խեղճերի հիւանդութիւնները:

Կան հիւանդութիւններ, որոնք բնութենակ են անցնելու մէկ մարդուց միւսին, այդ վարակիչ հիւանդութիւններն են:

Սկսելով խեղճի խրճիթում, այդ հիւանդութիւնը անից տուն անցնելով, հասնում է շատ անգամ հարուստ մարդկանց քարաշէն ապարանքներին: Սեփական շահն, ուրեմն, դրդում է հարուստին հիւանդութիւնների տարածման առաջն առնել: Իսկ դրա համար անհրաժեշտ է տալ ազդեցութիւններին մատչելի բժշկական օգնութիւն: Վարակիչ հիւանդութիւնների վախն առանձնապէս զգալի դեր է խաղացել Ռուսաստանում: Ի միջի այլոց մեր ամբողջ գործարանային բժշկութիւնն իւր սկիզբն առնում է 1866 թ. խօլերայից, որն և կեանքի կոչեց «ժամանակաւոր օրէնքները»,

որոնք պարտաւորեցնում էին գործարանատէրերին գործարաններին կից ունենալ հիւանդանոցներ:

Ինչպէս մենք արդէն յիշեցինք, Ռուսաստանում գոյութիւն ունին գործարանային բժշկութիւնից զատ, հասարակական բժշկութեան երկու ուրիշ տեսակներ — քաղաքային և զինուորային:

Մի քանի քաղաքներ կազմակերպում են հիւանդանոցներ և բնդունարաններ (պրեօմըյ պախոյ), որտեղ աղքատ քաղաքացիք ձրի են բնդունւում: Վարձւում են նաև քաղաքային ինքնավարութիւնների կողմից (գումսկի) առանձին բժիշկներ, որոնք պարտաւոր են ձրի բժշկելու աղքատ հիւանդներին՝ ժուէն այցելելով: Քաղաքային, ինչպէս նաև գործարանային բժշկութեան մէջ, բժիշկը ծառայութեան է մտնում մի ամբողջ հաստատութեան, ամբողջ հասարակութեան: Այստեղ ևս բժշկական օգնութեան համար բժրշկին վարձատրում են ոչ թէ հիւանդները, այլ առողջները, քանի որ բժիշկների ուսուցիչ արւում է քաղաքի միջոցներից, իսկ քաղաքային միջոցները գումարւում են ամբողջ աշխատունակ ազգաբնակչութեան վերայ դրւած հարկերից:

Ս.մէնամեծ զարգացումը, սակայն, ստացաւ հասարակական բժշկութիւնը Ռուսաստանի գիւղերում: Գիւղական աղքատ բնակչութիւնը երբէք չպիտի կարողանար ունենալ կանոնաւոր բժշկական օգնութիւն, եթէ նա ստիպւած լինէր դիմելու մասնաւոր պրաքտիկայով պարապօղ բժիշկներին: Գիւղերում այգպիսի բժիշկներ չկան էլ, քանի որ

բժիշկն աղքատ գիւղացիներէ մէջ ապրելով, ինքն էլ պէտք է աղքատանար: Ուստի, երբ անցեալ դարի 60-կան թւականներին գիւղացիներն աղատւեցին ճորտութիւնից, և պէտք եղաւ կանոնաւորել նորա կացութիւնը, — զեմտովոն ստիպւած եղաւ զիւզում կազմակերպել բժշկական օգնութիւն՝ հասարակական հիմքերի վերայ: Այդպէս յառաջ եկաւ մեր զեմտովային բժշկութիւնը:

Զեմտովոն ժողովրդից հաւաքած միջոցների մի մասը յատկացնում է բժիշկների, ֆելդշերների և հիւանդանոցների պահելու համար: Գաւառները բաժանւում են շրջանների և ամեն մի շրջանում տեղաւորւում է մի հիւանդանոց կամ բնիկներու, բժշկով և ֆելդշերով: Շրջանի ամբողջ բնակչութիւնը, առանց տարբերութեան դասակարգի և կարողութեան, իրաւունք ունի ծրի բժշկւելու այդ տեղերում, իսկ հարկ եղած դէպքում բժշկական օգնութիւն ստանալ նաև տանը:

Այս բոլորից ընթերցողը տեսնում է, որ հիւանդներին տրւելիք բժշկական օգնութիւնը կարող է կազմակերպւել տարբեր եղանակներով: Նա կարող է զբւել մասնաւոր բժշկական սկզբունքի և հասարակական հիմքերի վերայ:

Հասարակական բժշկութիւնն ունի նաև մի բանի մեք: Մեզանում՝ Ռուսաստանում ամենամեծ նշանակութիւն ունին գործարանային, քաղաքային և զեմտովային բժշկութիւնը: Հարց է այժմ, թէ որ բժշկական կազմակերպութիւնն աւելի է համապատասխանում բանւորական շահերին:

2. Գործարանային բժշկութիւն.

Մասնաւոր բժշկութեան համար մենք շատ բան չունենք ասելու: Մենք արդէն ասացինք, որ նա ձեռնտու չէ բանւորների համար: Նորանով կարող են օգտւել միայն ազգաբնակչութեան փոքր ի շատէ ունեւոր շրջանները: Ի հարկէ, լինում են դէպքեր, որ այս կամ այն բանւորը դիմում է մասնաւոր բժշկի, տալով նորան իւր վերջին կուպէլը. բայց այդ միայն երբեմնակի, որպէս բացառութիւն: Բոլոր բանւորները իրենց բոլոր հիւանդութիւնների ժամանակ անկարող են դիմել մասնաւոր բժիշկների օգնութեան: Բանւորները պէտք է ապահովւած լինին հասարակական բժշկութեան այս կամ այն ձևով:

Սակայն հասարակական բժշկութեան բոլոր տեսակներից, բանւորների շահին ամենաձեռնտուն գործարանային բժշկութիւնն է: Այժմ տեսնենք, թէ ինչպէս է կազմակերպւած մեզանում գործարանային բժշկութիւնը:

Այն օրէնքը, որը մեզանում կեանքի կոչեց գործարանական բժշկութիւնը, հրատարակւեց սրանից 43 տարի առաջ, 1866 թ. օգոստոսի 26-ին: Ըստ այդ օրէնքի գործարանատէրերը պարտաւորւում էին ապահովելու իրենց բանւորներին բժշկական օգնութեամբ. այդ օգնութիւնը պէտք է լինէր բոլորովին ծրի. ծանր հիւանդների համար պէտք է կազմակերպւէին հիւանդանոցներ այն

1003
13138

հաշուով, որ իւրաքանչիւր 100 բանւորին ընկնէր մի մահճակալ:

Արդէն 43 տարի է անցել այդ օրէնքի հրատարակման օրից և կեանքը կարողացաւ ակներև դարձնել նորա պակասութիւնները: Բացի այդ՝ օրէնքի հրատարակութիւնից յետոյ յայտարարւեցին մի շարք կարգադրութիւններ և լուսաբանութիւններ, որոնցով աւելի էր թուլանում այդ օրէնքի նշանակութիւնը: Այդ իսկ պատճառով զարմանալի չէ, որ մինչ այսօր մեր գործարանային բժշկութիւնը մնում է դարգացման ամենացած աստիճանի վերայ՝ բազմաթիւ խոշոր պակասութիւններով:

Ամենից առաջ միայն ամենախոշոր գործարաններն են, որ ունին փոքր 'ի շատէ տանելի բժշկական օգնութիւն: Բայց այստեղ էլ մահճակալների թիւը սովորաբար աւելի քիչ է, քան որ պահանջուում է օրէնքով:

Գործարանները բոլորովին հասկանալի պատճառներով չեն սիրում ծանր հիւանդներին, որոնք վատ սովորութիւն ունեն երկար պարկելու: Այդպիսի հիւանդներին նոքա աշխատում են տեղաւորել որեւէ քաղաքային կամ զեմստվային հիւանդանոցում: Գործարանական հիւանդանոցներում մնում են սովորաբար նոքա, որոնք ունին սուր, շուտ անցնող հիւանդութիւններ կամ վնասաւածներ աշխատանքի ժամանակ: Այդպիսով հիւանդ բանւորների զգալի մասն ստիպւած է օգնութեան դիմել գործարանային հիւանդանոցներից դուրս:

Աշխատելով անտեսել, գործարանների տէրե-

րից շատերն աշխատում են ամեն կերպ կրճատել բանւորների բժշկական օգնութեան համար տրւելիք ծախսերը: Այդ ծախսերը նոքա համարում են «անարդիւնաբեր», որոնք օգուտի դիզելուն չեն նպաստում. իսկ բանւորի առողջութիւնը, նոցա կարծիքով, արդիւնաբերութեան հետ առնչութիւն չունեցող մի բան է:

Ահա թէ ինչու, միայն սակաւաթիւ գործարաններում հիւանդանոցները դրւած են կանոնաւոր հիմքերի վերայ, տեղաւորում են լաւ ու ընդարձակ շինութիւններում և ունին ինչ որ հարկաւոր է: Գործարանային հիւանդանոցների մեծամասնութիւնն, ընդհակառակը, շատ վատ են դրւած. — խոնաւ, կիսամութ, նեղ և ցեխոտ բնակարաններում մի կերպ դարստուած են խախտւտ մահճակալները, ծածկւած պատառոտուած ու կեղտոտ սպիտակեղէնով, և դա փքուն խօսքով կոչում է «գործարանային հիւանդանոց»:

Շնորհիւ նոյն խնայողութեան՝ բժիշկների, ֆելդշերների և խնամողների թիւը համարեա՛ միշտ աւելի քիչ է լինում, քան որ անհրաժեշտ է գործը կանոնաւոր կերպով տանելու համար: Բոլորը ծանրաբեռնւած են աշխատանքով, և դրա համար ոչ ոք չի կարողանում իւր գործն անել այնպէս, ինչպէս որ հարկն է: Բժիշկն օրական երբեմն ընդունում է հարիւր—հարիւր չիտուն հիւանդներ: Հասկանալի է, որ այդպիսի պայմաններում նորանից չի կարելի պահանջել հիւանդի ուշադիր և մանրամասն հետազոտութիւն: Շատ անգամ նա ստիպւած

է սահմանափակել սոսկ հարցերով: Բնական է, որ այդպիսի պայմաններում բժշկութիւնը բանւորներին շատ քիչ օգուտ կարող է տալ:

Բայց եթէ գործարանային հիւանդանոցը լաւ լինի և հիւանդները ընդունելութիւնն էլ կանոնաւոր դրւած, այնուամենայնիւ բանւորի համար դա դեռևս քիչ է: Բանւորի համար անհրաժեշտ է, որ նորա ընտանիքն էլ ստանայ բժշկական օգնութիւն: Նա չի կարող բաւականանալ միայն նորանով, որ իրա համար կայ բարեկեցիկ հիւանդանոց, լաւ բժիշկ և ձրի դեղորայք, երբ իւր կինն ու զաւակները հիւանդութեան դէպքում չպիտի կարողանան օգտել որևէ բժշկական օգնութեամբ: Այն ինչ բանւորների ընտանիքները, հաղադէպ բացառութիւններով, բոլորովին չեն ընդունում գործարանային հիւանդանոցները: Ինչպէս երթևեկ հիւանդներ նոքա կարող են բժշկել, այն էլ ոչ բոլոր գործարաններում:

Բացի դրանից գործարանային բժշկութիւնն ունի նաև մի մեծ պակասութիւն, որը բանւորների համար շատ զգալի է. այդ այն է, որ բանւորներին շատ քիչ անգամ բժշկում են տանը պառկած ժամանակ: Հիւանդ բանւորն ամեն անգամ չի կարող գնալ գործարանային բժշկի մօտ, ինչպէս և չի կարող հիւանդութեան հէնց առաջին օրն իսկ տեղաւորել հիւանդանոցում: Դէթ մէկ կամ երկու անգամ պէտք է, որ բժիշկը նորան տանն այցելէ: Նոյն իսկ այն գործարաններում, որտեղ բժշկական օգնութիւնը ամեն կողմից լաւ է դրւած, բժշկի

համար շատ դժւար է հիւանդներին տուն այցելել:

Եթէ ենթադրենք, որ գործարանի հիւանդանոցում կայ բժշկի մշտական հերթապահութիւն, բայց և բժիշկն էլ ունի իւր բազմաթիւ գործերը և նա չի կարող ամբողջ օրը շրջել հիւանդ բանւորների բնակարաններում:

Թէև թղթի վերայ դրւած է, որ բոլոր գործարանային բժիշկները պարտաւոր են օգնել հիւանդներին՝ տուն այցելելով, բայց իրապէս այդպէս չի լինում: Գործարանային բժիշկը գործարանում այնքան շատ աշխատանք ունի կատարելու, որ բանւորներն իրանք անչարմար են գտնում պահանջել նորանից հիւանդների տներն այցելել և աշխատում են դրա համար նորան տալն անհնարապէս վարձատրել: Յաճախ բանւորները տուն են հրաւիրում մասնաւոր բժիշկներ, խուսափելով այն դժւարութիւններից, որոնց հետ կապւած է գործարանային բժշկին տուն հրաւիրելը:

Այդպէս է բանը մեծ գործարաններում: Բայց չէ՞ որ վերջիններիս թիւը շատ քիչ է — հազիւ մէկ քսաներորդ (¹/₂₀) մասը բոլոր գործարանների: Մնացածներում բանւորների բժշկական գործը դրւած է աւելի վատ, կամ բոլորովին բացակայում է: Փոքր գործարանները հիւանդանոցներ չունին և մշտական բժիշկներ չեն պահում: Որպէսզի մի կերպ կատարած լինեն օրէնքի պահանջը, նոքա կազմակերպում են, այսպէս կոչւած, ընդունարաններ (պրիօմնիլ պոլօյ), որտեղ մեի համար շարւած են

մէկ կամ երկու թախտեր և պահարան՝ մի քանի դեղերով: Այդ թախտերի վերայ երբէք չեն պարկուծ հիւանդներ և պահարանից էլ բնաւ դեղ չի վերցուած:

Այդ բոլորը արւում է միայն գործարանային տեսչին (Ֆարբիչնի ինսպեկտոր) խափելու համար:

Իժիշկը կամ ֆելդշերը երբեմնակի այցելում են գործարանը և բնորոշում այնտեղ պատահաբար գտնուած հիւանդներին: Մնացած ժամանակները բանւորները մատնուած են բաղդի քմահաճոյքին:

Մի քանի գործարաններում գործադրւում է մի այլ միջոց բանւորներին բժշկական օգնութեամբ ապահովելու, այդ զեմստիօների և քաղաքների հետ կապած համաձայնութիւնն է: Իրա համար գործարանատէրը պայման է կապում այն ղեմստիօյի հետ, որտեղ գտնւում է իւր գործարանը, պարտաւորելով վճարել տարեկան որոշ գումար:

Ձեմստիօն էլ, իւր կողմից, պարտաւորութիւն է վերցնում իւր վերայ բժշկել բանւորներին, դեղեր տալ նոցա, տեղաւորել հիւանդանոցում և այլն: Նոյն բանն է կատարւում, երբ գործարանատէրը պայմանաւորւում է քաղաքային վարչութիւնների հետ:

Այժմ հարց է, թէ արդեօք բանւորի համար դա աւելի՞ ձեռնառու է, թէ ոչ: Իրան կարելի է պատասխանել այսպէս, երբեմն այո՛, երբեմն ո՛չ: Եթէ խօսքը մի քանի տասնեակ բանւորներ ունեցող փոքրիկ գործարանների մասին է, ապա բնական է, որ նոքա հնարաւորութիւն չպիտի ունե-

նան բունւորների համար կաղմակերպել կանոնաւոր բժշկական օգնութիւն: Առանձին հիւանդանոց և բժիշկ պահելը պահանջում են այնպիսի ծախսեր, որոնցից այդ փոքրիկ գործարաններն իրենց համեստ շրջանառութեամբ կարող էին կատարելապէս քայքայւել: Այդ դժւարութիւնից դուրս գալու համար փոքր գործարաններն զիտեն լաւ միջոց՝ բանւորներին չտալ ոչ մի բժշկական օգնութիւն:

Եւ ահա՛, երբ այդպիսի գործարանները համաձայնութեան են գալիս ղեմստիօների հետ, ապա՛ այդ որոշ չափով բարելաւում է բանւորների կացութիւնը — մանաւանդ այն դէպքում, երբ ղեմստիօյին հիւանդանոցը գործարանին մօտ է:

Իսկ եթէ համաձայնութիւն է կայացնում խոշոր գործարանը, որի տէրը ղեմստիօյի օգնութեան դիմում է ոչ թէ նորա համար, որ ոչժ չունի հիւանդանոց պահելու, այլ նորա համար, որ իրան այդ շատ աւելի ձեռնառու է, ապա բանւորները բնականօրէն ոչ թէ շահում են, այլ կորցնում:

1897 թ. Առևտրի և Մանուֆակտուրի Դեպարտամենտը հաւաքեց տեղեկութիւններ, թէ ի՞նչ է նստում գործարանատէրին ամեն մի բանւորին աւած բժշկական օգնութիւնը: Երևաց, որ խոշոր գործարանատէրերը (որոնք 1000-ից աւել բանւորներ ունին) սեփական հիւանդանոց կաղմակերպելու դէպքում ամեն մի բանւորի վերայ ծախսում են տարեկան 4 ռ., իսկ ղեմստիօների հետ պայմանաւորելիս միայն 75 կ., այսինքն 5 անգամ աւելի քիչ:

Որքան էլ որ խնայելով վարի գեմստվօն իւր գործերը, այնուամենայնիւ պարզ է, որ 75 կ. բան-
 ւորը կ'ստանայ աւելի քիչ, քան 4 ռուբլու: Վեր-
 չապէս քաղաքների և գեմստվօների հետ կապած
 համաձայնութիւնների մասին խօսելիս, պէտք է
 ՚ի նկատի ունենալ նաև մէկ ուրիշ հանգամանք:

Եթէ քաղաքային և զամստվային բժշկութիւնն
 ամեն տեղ լաւ հիմքերի վերայ զրուած լինէր, ապա
 բանւորների համար, անշուշտ, օգտաւէտ կլինէր,
 որ նոցա ձեռքն անցնէր այդ գործը: Բայց, ինչպէս
 մենք կ'տեսնենք շարունակութեան վերայ, թէ քա-
 ղաքային և թէ գեմստվային բժշկութիւնը դեռ ևս
 շատ պակասութիւններ ունեն:

Այժմ բերենք մի քանի թւեր, որպէսզի ըն-
 թերցողը կարողանայ համոզւել մեր ասածների վե-
 րաբերմամբ:

1897 թ. զործարանական տեսչութեան են-
 թարկւում էին 19 հազար արդիւնաբերական հաս-
 տատութիւններ, որոնց մէջ աշխատում էին մօտա-
 ւորապէս $1\frac{1}{2}$ միլիօն բանւորներ: Իոցանից միայն
 3 հազարը մէկ միլիօն բանւորներով ունէին որևէ
 բժշկական օգնութիւն. մնացածները բոլորովին
 չունէին: Այդպիսով, ուրեմն, չնայած զործարա-
 նային տեսչութեան հսկողութեան, բանւորներին
 բժշկական օգնութեամբ ապահովելու պարտադիր
 օրէնքը չէր կատարւում բոլորովին 16 հազար
 հաստատութիւններում, այսինքն աւելի քան $\frac{5}{6}$
 ընդհանուր թւի: Իրանով տեսչութեան վերահսկո-
 յութեան տակ զտնւած բանւորների մի երրորդա-

կան մասը զրկւած էր մնում բժշկական օգնու-
 թիւնից:

Իսկ ի՞նչ էր կատարւում այն բաղդաւոր հաս-
 տատութիւններում, որոնք «ապահովւած» էին
 բժշկական օգնութեամբ:

Հիւանդանոցներ գոյութիւն ունէին միայն
 700 փոքր ՚ի շատէ խոշոր գործարաններում, որոնց
 մէջ աշխատում էին միլիօն թւով կէս միլիօն բան-
 ւորներ: Քիչ թէ շատ ապահովւած էին, հետեա-
 պէս, բոլոր բանւորների մի երրորդական մասը:
 450 գործարաններում՝ 170 հազար բանւորներով
 կային միայն ընդունարաններ:

1500 գործարաններ 220 հազար բանւորներով
 այդ էլ չունէին. կար միայն երթեկէ հիւանդների
 ընդունելութիւն: Եւ վերջապէս 318 արդիւնաբե-
 րական հաստատութիւններ իրենց 65 հազար բան-
 ւորներին ապահովում էին՝ պայմանաւորելով գեմ-
 ստվային և քաղաքային վարչութիւնների հետ:

Ամփոփելով մեր խօսքերը, կարող էինք այս-
 պէս բնորոշել մեր զործարանային բժշկութիւնը:

Բանւորների մի երրորդական մասն ստանում
 է շատ թէ քիչ տանելի բժշկական օգնութիւն:

Մի երրորդականն ստանում է վերին աստի-
 նանի անբաւարար օգնութիւն:

Մի երրորդականը բոլորովին օգնութիւն չի
 ստանում:

Ընթերցողը տեսնում է, թէ ժամանակակից
 զործարանային բժշկութիւնը ռրքան քիչ է համա-
 պատասխանում բանւորների շահերին: Բայց մենք

չթւեցինք զեռես զործարանային բժշկութեան բո-
լոր թերութիւնները: Գոյութիւն ունի մի պակասու-
թիւն, որն զգալի չափով նւագեցնում է առանց այն
էլ չնչին՝ բժշկական օգնութեան հասցրած օգուտը:

1886 թ. հրատարակեցին օրէնքներ բանւոր-
ներին վարձելու պայմանների մասին: Այդ օրէնք-
ների մի յօդուածի հիման վերայ, զործարանատէրը
կարող է ամեն ժամանակ արձակել բանւորին,
երկու շաբաթ առաջուց նախապէս յայտնելով նո-
րան այդ մասին: Այդ նոր օրէնքով ստեղծւում էր
հնարաւորութիւն չկատարել 1866 թ. օրէնքի պա-
հանջները: Շատ տեղերում մի այսպիսի սովորու-
թիւն յառաջ եկաւ. հէնց որ բանւորը բռնւում էր
փոքր ինչ լուրջ հիւանդութեամբ, նորան յայտա-
րարւում էր նախադրուշութիւն պայմանը խախ-
տելու մասին և երկու շաբաթից յետոյ արձակ-
ւում էր զործարանից: Արձակելուց յետոյ նա այլ
ևս բանւոր չէր և զործարանն էլ, հետևաբար,
պարտաւոր չէր նորան բժշկել: Այդպիսով ուրեմն,
իրապէս, բանւորը զործարանային բժշկութիւնից
երկու շաբաթից աւել չէր կարող օգուտել:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ոչ բոլոր
հիւանդութիւններից կարելի է երկու շաբաթում
բժշկուել:

Յատկապէս այն հիւանդութիւնները, որ աշ-
խատաւորը ձեռք է բերում զործարանում, աշխա-
տելով վատ օդի, շոգի, խոնաւութեան, փոշու և
վնասակար զաղերի մէջ, — հէնց դոքա էլ լինում
են երկարատև և պահանջում են տևական բժշկու-

թիւն: Բայց զործարանի պէտքը չէ, թէ բանւորը
կորցրել է իւր առողջութիւնը, որ նորա ուժերն
սպառւել են զործարանային օգուտը զիպելու հա-
մար. նա երկու շաբաթից աւել չի ուզում բժշկել:
Նորա համար աւելի ձեռնտու է ձերացած, հիւժ-
ւած բանւորի փոխարէն վարձել մէկ ուրիշ երի-
տասարդ և առողջ բանւոր, որից կարելի է մի քա-
նի տարի անարգել օգուտել:

Բացի դրանից կան մի շարք հիւանդութիւն-
ներ, որոնց հիման վերայ ըստ մեր օրէնքի գոր-
ծարանն իրաւունք ունի արձակել բանւորին ա-
ռանց որևէ նախադրուշութեան և հետևաբար բո-
լորովին զրկել նորան զործարանային բժշկութիւ-
նից օգուտելու հնարաւորութիւնից:

Այդ վարակիչ հիւանդութիւններն են: Օրէնքը
հրատարակելիս, պարզ է, որ չենւում էին այն դա-
տողութեան վերայ, թէ վարակիչ հիւանդութիւն-
ները յառաջանում են վարակելուց. մեղքը գոր-
ծարանինը չէ, ուրեմն և անարդար կլինի սախել
նորան բժշկելու բանւորին:

Որ վարակիչ հիւանդութիւնները յառաջանում
են վարակելուց — այդ ճիշտ է. բայց որ, յա-
կապէս բանւորները վարակւում են ամենից հշտ
այդ հիւանդութիւններով՝ այդ էլ ճիշտ է: Քամին
թռցնում է ծառից ո՛չ բոլոր տերեւները, այլ նո-
րանց, որոնք դեղնել, թառամել ու չորացել են
արդէն: Այդպէս էլ վարակիչ հիւանդութիւններով
բռնւում են ոչ բոլորը, այլ պիտաւորապէս թոյլերն
ու հիւժւածները: Այդ պատճառով էլ բանւորները

հնչողութեամբ են հիւանդանում վարակիչ հիւանդութիւններով, քանի որ նոցա ոչեքը շատուել են և առողջութիւնն էլ քայքայուել աշխատանքի ծանր պայմաններէց:

Յոգնած ու ջարդուած բանւորը, գիշերային աշխատանքից տուն վերադառնալիս, անձրեկից ու ցրտից մրսում է ու բռնւում տիֆով: Ասացէք խնդրեմ, ո՞վ է այստեղ մեղաւորը. վարակիչ տիֆը, թէ յոգնածութիւնը. անքուն գիշերները, և ընդհանրապէս գործարանային աշխատանքի ծանր պայմանները:

Այս բոլորից չետոյ կարծեմ ընթերցողի համար պարզ է, որ մեր գործարանային բժշկութիւնը, դրած է շատ վատ հիմքերի վերայ և որ նա շատ հեռու է բանւորների բժշկական կարիքներին բաւարարութիւն տալուց:

Այժմ տեսնենք, թէ ի՞նչ են տալիս աշխատաւորին հասարակական բժշկութեան միւս ձևերը — քաղաքային և զեմստովային բժշկութիւնները:

3. Քաղաքային և զեմստովային բժշկութիւն.

Քաղաքային և զեմստովային բժշկութիւնը բանւորի համար կարեւոր է, քանի որ նա չաճախ դիմում է նոցա օգնութեան: Բոլոր այն դէպքերում, երբ գործարաններում չկան հիւանդանոցներ և բժիշկներ, հիւանդ բանւորները ստիպուած են դի-

մելու քաղաքային և զեմստովային հիւանդանոցները, քաղաքային կամ զեմստովայական բժիշկներին: Իսկ մենք արդէն տեսնեք, որ այդպիսի գործարանների թիւը քիչ չէ: Քաղաքային և զեմստովային բժշկութեան օգնութեանն է դիմելու բանւորը նաև այն դէպքում, երբ գործարանատէրը — օրէնքի հիման վերայ — արձակում է նորան և այդպիսով զրրկում հնարաւորութիւնից բժշկելու գործարանում:

Պարապութեան և անգործութեան ժամանակ, երբ բանւորի առաջ փակուած են գործարանի դռները, հիւանդութեան դէպքում նա կարող է օգնութիւն ստանալ միմիայն քաղաքային կամ զեմստովային հիւանդանոց—ընդունարաններում:

Վերջապէս բանւորների ընտանիքները, — նոցա կանայք ու զաւակները, որոնք շատ անգամ չեն ընդունում գործարանային հիւանդանոցները՝ մեծաւ մասամբ օգնութիւն են ստանում քաղաքային և զեմստովային բժիշկներից:

Այդպիսով, կարելի է ասել, որ զեմստովային և քաղաքային բժշկութիւնները շրջապատում են բանւորին ամեն կողմից, — և նա պէտք ունի նոցա դիմելու: Իրա համար էլ նա պէտք է իմանայ, թէ ի՞նչ կաղմութիւն ունեն նոցա և որոնք են նոցա պակասութիւնները:

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ քաղաքային և զեմստովային բժշկութիւններն աւելի լաւ են դրած, քան գործարանայինը: Այդ բացատրում է նորանով, որ քաղաքային ու զեմստովային

ներկայացուցիչները (քաղաքային և զեմստովային վարչութիւնները) գործադրում են բժշկական օգնութիւն կազմակերպելու վերայ ոչ թէ իրենց սեփական միջոցները, այլ հասարակական գումարները, դրա համար էլ նոքա, համեմատած գործարանատէրերի հետ, աւելի քիչ են շահագորգուած խնայելու մէջ և աւելի ուշադիր են ըստ կարելոյն գործը լաւ հիմքերի վերայ դնելու:

Այդ բոլորով մէկտեղ քաղաքային և զեմստովային բժշկութիւններն ունին նաև շատ թերութիւններ:

Քաղաքային բժշկութեան բազմակերպելու հոգան ընկած է քաղաքային վարչութեան վերայ: Քաղաքները մեղանում, ինչպէս յայտնի է, կառավարում են տեղային ինքնավարութեամբ, որի մէջ մտնում են ընտրւած ձայնաւորները: Ընտրութիւններին կարող են մասնակցել միայն տնտեսէրերը. այդպիսով քաղաքի ամբողջ տնտեսութիւնը զտրւում է հարուստների ձեռքերում: Հէնց միայն այդ պատճառով զժլար է սպասել մեր քաղաքային ինքնավարութիւններից որևէ ցաւակցութիւն և ուշադրութիւն աղքատ բնակիչների կարիքների նկատմամբ: Եւ չիրաւի. քաղաքային ինքնավարութիւնները անում են խեղճերի համար միայն այնքան, որից քիչ անել արգէն անհնարին է *):

*) Ի միջի պլոց, մեր քաղաքներն աշխատում են շատացնելու գիմնադրանքի թիւը, որոնցից օգուում են գլխաւորապէս հարուստների զաւակները: Աղքատ հասարակութեան համար զոնէ անհրաժեշտ է բաց անել նաև

Բոլոր քաղաքներում հիւանդանոցների կարիք է զգացւում: Հիւանդանոցում հիւանդին անդաւորելու համար տեղ դոնէն ընդհանրապէս շատ դժուար է: Ետտ անգամ հիւանդին ամբողջ օրը մէկ հիւանդանոցից միւսը քաշ տալուց յետոյ հազիւ է յաջողում նորան որևէ անկիւնում տեղաւորել: Եղել են շատ զէպքեր, երբ հիւանդն այդ երկար ու բարակ ճանապարհորդութիւնների ժամանակ հոգին աւանդել է: Բնական է, ուրեմն, որ հիւանդանոցները լինին լեփ լեցուն:

Հիւանդանոցը, որը շինւած է հարիւր հիւանդի համար, լցւած են երկու հարիւր և աւելի հիւանդներով: Պէտք չկայ անպատճառ բժիշկ լինելու, որ հասկանալի դառնայ թէ որքան վնասակար է հիւանդների համար այդ նեղւածութիւնը: Այդպիսի պայմաններում հազիւ թէ կարելի լինի խօսել կանոնաւոր բժշկութեան մասին: Իա աւելի աղքատների օթեան է, քան հիւանդանոց: Այդպէս է գործը դրւած սովորական ժամանակ: Իսկ երբ վրայ է հասնում համաճարակը, որը միանգամից զգալի չափով բազմացնում է հիւանդների թիւը քաղաքում, — այն ժամանակ դրութիւնն աւելի է վատթարանում: Քաղաքային վարչութիւնները շտապով կառուցանում են բարակներ կամ վարժում առաջին իսկ պատահած շինութիւնը, ժամանակա-

տեխնիքական և գիւղատնտեսական ուսումնարաններ և զասընթացքներ, և այդ կլինի այն զէպքում, երբ մեր դուժմները կլինին դեմօկրատիկ (ուսմկավարական):

Ծանօթ. հրատ.

ւոր հիւանդանոց բանալու համար: Ժամանակաւոր հիւանդանոցներում պայմաններն աւելի վատ են լինում, քան մշտական հիւանդանոցներում, քանի որ այդ շինութիւններն յարմարեցրած չեն հիւանդանոցների համար: Ծինել վարակիչ հիւանդութիւնների համար առանձին, լաւ հիւանդանոցներ, մեր քաղաքները մեծաւ մասամբ համարում են աւելորդ շռայլութիւն:

Քաղաքային հիւանդանոցների խոշոր պակասութիւններից մէկն էլ այն է, որ բժշկելու համար վարձ են վերցնում: Ճիշտ է, վարձը մեծ չէ, ասենք 5—10 ր. ամսական, բայց աղքատի համար ընդհանրապէս դա մի զգալի գումար է, առանձնապէս հիւանդութեան ժամանակ, երբ նա կորցնում է իւր աշխատավարձը, ամեն մի վարձատրութիւն նորա ուժից բարձր է: Ծնորհիւ այդ հանդամանքի շատ հիւանդներ չեն կարողանում տեղաւորել հիւանդանոցներում նոյն իսկ այն դէպքում, երբ կան ազատ մահճակալներ:

Երթևեկ հիւանդների համար քաղաքներում լինում են, այսպէս կոչւած, ամբուլատորիաներ: Այդ կողմից էլ կրկին հանդէս է գալիս քաղաքային վարչութիւնների անուշաղորութիւնը քաղաքի աղքատ բնակչութեան կարիքների վերաբերմամբ: Ամբուլատորիաների թիւը միշտ աւելի բիչ է լինում, քան որ հարկաւոր է: Այդ պատճառով էլ նոքա միշտ լիքն են:

Շատ անգամ բժիշկը ստիպւած է ընդունել օրական 150—200 հիւանդներ. մի թիւ, որ 4—5

օրէայ լուրջ աշխատանքի նիւթ է: Բժիշկն ի՞նչպէս կարող է այդպիսի պայմաններում հիւանդներ ընդունել:

Կարելի՞ բան է պահանջել նորանից ուշադիր վերաբերմունք, լրջութիւն և բարեխղճութիւն:

Փոքր 'ի շատէ զարգացած հիւանդները հասկանում են այդ ամբուլատորիաների անբաւարար դրութիւնը, և խուսափում են նոցանից:

Բանւորը յաճախ պատրաստ է տալու իւր վերջին կոպէկը, միայն թէ չդիմի քաղաքային ձրի ամբուլատորիաները:

Բայց այդ բոլորից աւելի ծանրը՝ բժշկին տուն հրաւիրելն է: Աղքատ հիւանդն էլի կարող է որևէ բժշկութիւն գտնել ամբուլատորիայում, կարող է մի կերպ ընկնել հիւանդանոց, բայց բժշկին տուն հրաւիրելը՝ նորա ուժից բոլորովին վեր է: Միայն խոշոր քաղաքներից մի քանիսներում (Պետերբուրգ, Օդեսսա, Տփլիս և այլն) կան վարձւած բժիշկներ, որոնց պարտաւորութիւնն է, 'ի միշի այլոց, հիւանդներին ձրի բժշկական օգնութիւն հասցնել նաև տանը:

Բայց և այդ քաղաքներում նման բժիշկների թիւը շատ քիչ է, որ լիովին կարելի լինէր բաւարարութիւն տալ ազգաբնակչութեան պէտքերին: Իսկ այն բազմաթիւ քաղաքներում, որտեղ այդպիսի բժշկական պաշտօններ չկան, ամեն մի ծանր հիւանդ ստիպւած է տեղաւորելու կամ հիւանդանոցում, կամ դիմելու մասնաւոր բժիշկների օգնու-

թեան, որոնք, 'ի հարկէ, պարտաւոր չեն հիւանդ-
ներին ձրի բժշկելու:

Խեղճ հիւանդն ինքը չկամենալով բժշկու-
թիւնը իբրև ողորմութիւն ստանալ, ստիպւած զրաւ
է գնում իւր վերջին շորի կտորը, որպէսզի վար-
ձատրէ բժշկի այցելութիւնը և դեղ գնէ:

Ահա թէ ինչպէս է կազմակերպւած մեր քա-
ղաքային բժշկութիւնը:

Զեմստօվային բժշկութիւնը մի քիչ աւելի լաւ
է դրւած, քան քաղաքայինը, բայց և նա անկա-
րող է հիւանդ բանւորին ազատել կատարելապէս
տանջանքներից: Նախ և առաջ զեմստօվային բժշկու-
թիւնը 'ի նկատի ունի զլիաւորապէս զիւղացի-
ների կարիքները, զիւղի պէտքերը, իսկ բանւոր-
ներն ապրում են մեծաւ մասամբ քաղաքներում:
Հետեւապէս, որքան էլ որ լաւ կազմակերպւած լի-
նի զեմստօվային բժշկութիւնը, այնուամենայնիւ
նորանից բանւորը մեծ օգուտ չունի, քանի որ
բանւորութեան մի աննշան մասը միայն կարող է
օգտւել նորանից այն դէպքում, երբ նոքա գոր-
ծարաններին մօտ են: Ընդհանրապէս զեմստօվային
հիւանդանոցները իրարուց բաւական հեռու են
գտնուում և բանւորը նոցանից օգտւելու համար
պէտք է ոտով գնայ մի քանի վերստ, որ 'ի հարկէ
շատ դժւար է: Յետոյ զեմստօվային բժշկու-թիւնը,
իւր բոլոր առաւելութիւններով մէկտեղ, — դեռ
ևս շատ հեռու է կատարելութիւնից և ունի նոյն-

պէս շատ խոշոր պակասութիւններ: Զեմստօվային
բժշկութիւնը լաւ է նրանով, որ բժշկական օդնու-
թիւնը տալիս է բոլորովին ձրի: Գան, չիրաւի, մի
քանի զեմստօվոնք, որոնք իւրաքանչիւր եկւոր հի-
ւանդից դեղի համար վերցնում են մի քանի կո-
պէկ (10—15 կ.), բայց և նոքա բոլորովին աղ-
քատներին աղատում են այդ վճարից: Իսկ հիւան-
դանոցներում բոլորովին ձրի է բժշկութիւնը:

Զեմստօվային բժշկութեան միւս աչքի բնկնող
առաւելութիւնը կայանում է նորանում, որ այն-
տեղ կարելի է հիւանդներին տուն այցելել: Ճիշտ
է, զիւղերի հեռաւորութեան, և զեմստօվային բժիշկ-
ների աշխատանքների ծանրութեան ու շատու-
թեան պատճառով այդպիսի այցելութիւնները
լինում են երբեմնակի, այնուամենայնիւ ծանր դէպ-
քերում զիւղացին միշտ էլ կարող է բժշկին տուն
հրաւիրել:

Զեմստօվային հիւանդանոցներն ընդհանրապէս
աւելի լաւ են կազմակերպւած, քան քաղաքայինը:
Բարեկարգ զեմստօվոնքերում իւրաքանչիւր 10—20
վերստի վերայ կայ մի փոքրիկ հիւանդանոց՝
բժշկով, ֆելդշերով և մանկաբարձուհով: Զեմ-
ստօվային հիւանդանոցները, միւս կողմից, աւելի
ազատ են, քան հիւանդներով լեփ լեցուն քաղա-
քային հիւանդանոցները:

Այս բոլորով հանդերձ, ինչպէս ասացինք,
զեմստօվային բժշկութիւնն էլ ունի բաւական պա-
կասութիւններ. այնպէս որ նորանով էլ ոգևորւել
չարժէ: Զեմստօվային անտեսութիւնն էլ, քաղաքայինի

նման, դանւում է աղգարնակութեան աւելի ունեոր մասի ձեռքը: Ինչպէս քաղաքներում տիրապետող են տնատէրերը, այդպէս էլ զեմաստիւններում իշխում են կալւածատէրերը:

Կան զեմաստիւններ, ուր կալւածատէրերն ամենայետամնաց մարդիկ են, և չեն ուզում ճանաչել գիւղացիութեան կարիքները բժշկական գործում: Այդպիսի զեմաստիւններում հիւանդանոցների թիւը քիչ է, քիչ են նաև բժիշկները, ֆելդշերները և չկան դեղեր ու գործիքներ: Բժշկական կենտրոնները միմիանցից շատ հեռի են, և գիւղացիները ստիպւած են 60—70 վերստ կտրելու, որ բժշկի հանդիպեն: Միւս, աւելի յառաջադիմական զեմաստիւններում բժշկական գործի դանդաղ զարգացման պատճառը նիւթականի սղութիւնն է: Զեմաստիւն միջոցները հաւաքում է աղգարնակութիւնից, զլիսաւորապէս գիւղացիներից. իսկ սոված գիւղացուց էլ շատ բան չի կարելի ստանալ: Միւս կողմից կալւածատէրերին ձեռնտու չէ ի հարկէ հարկերի ծանրութիւնը ձգել հարուստների վերայ:

Ի վերջոյ մենք տեսնում ենք, որ զեմաստիւններում բժշկութիւնն էլ միշտ չի կարող բանւորի պէտքերին բաւարարութիւն տալ, երբ նա, կամ իւր ընտանիքը, բժշկական օգնութեան կարիք ունի:

4. Հիւանդ բանւորի միւս կարիքները.

Ենթադրենք մի րոպէ, որ մեր բոլոր գործարաններում կան բարեկարգ և ընդարձակ հիւանդանոցներ, որ բժիշկների թիւը զգալի չափով շատացել է, բանւորներն ՚ի հարկին ստանում են բժշկական օգնութիւն տանը, նոցա ընտանիքներն էլ հնարաւորութիւն են ձեռք բերում բժշկելու գործարանային հիւանդանոցներում, որ օրէնքն արդելում է գործարանատէրերին արժակել հիւանդացած բանւորներին: Յետոյ ենթադրենք, որ քաղաքային ու զեմաստիւններում բժշկութիւններն էլ ենթարկւել են նման կատարելագործման, ամեն տեղ բժշկութիւնը ձրի է, և այլն և այլն: Ոչ մի կասկած չկայ, որ այդ բոլորից յետոյ մեծ չափով կ'ապահովէր նորա առողջութիւնը, և բանւորը կ'աղատէր շատ ու շատ տանջանքներից: Բայց, դա էլ քիչ է:

Եւ քիչ կ'լինէր նորա համար, որ բացի հիւանդութիւնից, նա ունի մի դաժան թշնամի ևս, որն արթուն հսկում է բանւորի իւրաքանչիւր քայլը, և յարձակում է նորա վերայ առաջին յարմար րոպէին: Այդ թշնամին քաղցն է: Միայն անխոնջ ու անընդհատ աշխատանքով մանկութիւնից մինչ զերեզման — մի կերպ հեռու է պահում բանւորն իրանից այդ թշնամուն: Բայց բաւական է, որ մի քիչ թուլանայ բանւորի ոյժը, մի քիչ անընդունակ դառնայ նա աշխատելու և անա քաղցն անյապաղ ծառանում է նորա առաջ իւր ամբողջ

Թափով: Իսկ եթէ վրայ է հասնում հիւանդութիւնը, կորցնում է նա իւր աշխատունակութիւնը, — իսկոյն քաղցր վրայ է հասնում և նոցա ճմլում իւր սառն ճանկերի մէջ:

Բանւորի համար, այդպիսով, միայն բժշկական օգնութիւնը քիչ է, որքան էլ լաւ հիմքերի վերայ դրւած լինի նա: Եթէ բանւորը տանն է բժշկուում, ապա նա պիտի ունենայ որեւէ օգնութիւն, որ քաղցից չ'մեռնի: Իսկ եթէ նա պառկած է հիւանդանոցում, ապա նա պէտք է հանդիստ լինի իւր ընտանիքի վերաբերմամբ. հիւանդութեան ամբողջ ընթացքում ընտանիքը պէտք է ունենայ իւր սովորական եկամուտի գէթ մի մասը: Այդ կողմից զործարանային բանւորի դրութիւնն անհամեմատ աւելի վատ է, քան աշխատաւոր զիւղացուներ: Գիւղացին դոնէ որեւէ տնտեսութիւն ունի: Այդ տնտեսութիւնը մի կերպ, լաւ թէ վատ, կարող է իւր գոյութիւնը մի առժամանակ շարունակել նաև զիւղացու հիւանդութեան ժամանակ: Գիւղացին ունի հացի համեստ պաշար, որով կարող է ապրել նորա ընտանիքը: Վերջապէս զիւղացին ունի հարեաններ, որոնք նոյնպէս տնտեսութեան տէր են, ունին հացի որոշ պաշար. նա կարող է, այսպէս թէ այնպէս, չուսալ նոցա օգնութեան վերայ: Քաղաքային բանւորը զուրկ է տնտեսութիւնից էլ, պաշարից էլ: Նորա ընկեր բանւորներն էլ օրէ աշխատող ու ապրող մարդիկ են և Կժւար է չուսալ նոցանից օգնութիւն: Բաւական է որ հիւանդանայ

բանւորը, և ահա միւս օրը քաղցը կանգնած է նորա դռանը:

Սովի ուրւականը ստիպում է բանւորին հիւանդութեան դէպքում աշխատելու մինչ վերջին րոպէն: Ուժասպառ և ջարդած նա չի պառկում հիւանդանոցում, իմանալով, որ աշխատանքը թողնելով, մի շարք զրկանքների է մատնում իւր ընտանիքը: Շատ անգամ պատահում է, որ չնայելով բժշկի յորդորներին և խորհրդին, տեղաւորւել հիւանդանոցում, բանւորը շարունակում է յաճախել զործարան մինչև որ վերջնականապէս ցած է գլորւում: Անուշադրութեան մատնելով, հիւանդութիւնը դառնում է լուրջ և երբեմն նոյնիսկ անբուժելի: Եւ որքան էլ որ լաւ դրւած լինի այդ դէպքում զործարանային բժշկութիւնը, բանւորն ինչ օգուտ ունի:

Մի խօսքով, հիւանդութեան դէպքում բանւորը միայն բժշկական օգնութեան կարիք չունի, — նա պէտք ունի նաև ապրուստի, և կարևոր է որ նորա սովորական օրավարձն հիւանդութեան դէպքում ստացւի:

Որքան երկարում է հիւանդութիւնը, այնքան էլ աճում է կարիքը նորա ընտանիքում: Բաւական է որ մի-երկու ամիս նա մնայ հիւանդանոցում և նորա տունը կատարելապէս դատարկւում է, իր իրի չետէից դրաւ է դրւում: Սկզբում անհետանում են այն խղճուկ «չուսալութեան» իրեղէնները, որ կարող է իրեն թոյլ տալ բանւորը — ինքնաեռ, ամաններ, վարազոյրներ: Ապա իրար չետէից ծախ-

ուժ ու գրաւ են դրոււմ նաև ամենասնհրաժեշտ իրերը: Ընտանիքը մնում է առանց հագուստի, առանց օտնամանի և անկողնի: Սպա հասնում է ժամը, երբ ստիպւած է թողնել բնակարանը և վարձել մի որևէ խոնաւ ու մութ անկիւն՝ մէկ ուրիշ աղքատի բնակարանում: Եթէ հիւանդութիւնը ձգձգոււմ է, ապա բանւորի կիներն է դուրս գալիս աշխատանք որոնելու, իսկ եթէ նա ծանրաբեռնւած է երեխաներով, ապա նորան մնում է մի միջոց — ողորմութիւն խնդրել: Այդպէս կամացկամաց բանւորն ընկնում է մուրացկանութեան դիրկը:

Էլի ոչինչ, եթէ նա դուրս գալ հիւանդանոցից կազդուրւած և նորից սկսէ աշխատել: Իսկ եթէ նա մնայ հիւանդ ու թույլ մինչև իւր կեանքի վերջին շունչը, որ շատ անգամ է պատահում բանւորների հետ... Գործարանային աշխատանքը ստեղծում է բազմաթիւ անբուժելի հիւանդութիւններ: Գործարանի թունաւորւած մթնոլորտն ու փոշին անդառնալի կերպով խլում են բանւորից նորա առողջութիւնը:

Բացի դրանից նորա քայքայւած մարմինը հեշտութեամբ է ենթարկւում ամեն կարգի հիւանդութեան: Առանձնապէս տարածւած է բանւորների մէջ թոքախտը: Ի վուր չէ, որ նորան կոչում են «բանւորների հիւանդութիւն»: Եւ ահա թոքախտը միւս հիւանդութիւնների հետ մէկտեղ, շատ բանւորների դարձնում է աշխատելու անընդունակ: Ի՞նչպէս ապրի այդ բանւորը. ի՞նչ է մնում նորան

անել, քան եթէ կոշտացած ձեռքը մեկնել ու ողորմութիւն խնդրել:

Ահա թէ ինչո՞ւ միայն բժշկական օգնութեամբ չի կարող բուսկանանալ բանւորը: Գիչ է նաև, եթէ միայն հիւանդութեան ժամանակ նորան ուժիկ տրել: Անհրաժեշտ է, որ բանւորն ապահովւած լինի նաև այն դէպքում, երբ նորա հիւանդութիւնն անբուժելի է, երբ նա բոլորովին կորցրել է իւր առողջութիւնը: Ուրիշ խօսքով, — բանւորը պէտք է ապահովւած լինի նաև այն դէպքում, երբ դարձել է աշխատելու անընդունակ, երբ նա ինվալիդ է:

5. Բանւորների ապահովագրումը.

Բանւորի համար լաւագոյն բժշկական օգնութիւնը կլինի այն ժամանակ, երբ վերջինս միացած կլինի ապահովագրութեան հետ: Բանւորները ապահովագրւած պիտի լինեն հիւանդութեան և աշխատունակութիւնը կորցնելու դէմ: Այդպիսի ապահովագրութիւն գործում է արդէն արտասահմանեան մի քանի պետութիւններում: Ապահովագրութեան գործն ամենից լաւ դրւած է Գերմանիայում: Նորան էլ մենք կ'վերցնենք որպէս օրինակ, ցոյց տալու համար թէ որքան է ապահովւած այնտեղ բանւորը հիւանդութեան և աշխատանքի անընդունակ դառած դէպքում:

Թէ ի՞նչ բան է ապահովագրութիւնն ընդ-

հանրապէս — այդ մասին, երևի, ընթերցողն ունի որոշ չափով հասկացողութիւն: Բոլորը գիտեն, թէ ի՞նչպէս է կազմակերպւած, օրինակ, մեզանում այնքան տարածւած ապահովագրումը հրդեհների դէմ: Ով ուզում է իրան ապահովել հրդեհից չառաջանալիք վնասներից, իւր կայքը ապահովագրում է մի օրէէ ապահովագրական ընկերութեան մէջ: Նա պարտաւորւում է ընկերութեան դրամարկը մտցնել ամեն տարի որոշ վճար, իսկ ընկերութիւնն էլ պարտաւորւում է հրդեհի դէպքում տալ նորան կանխապէս պայմանաւորւած գումարը: Հրդեհները համեմատաբար լինում են քիչ, իսկ հրդեհի դէմ ապահովագրել ցանկացողների թիւը շատ մեծ է: Ամեն մի ապահովագրող վճարում է մի համեստ գումար, բայց նոցանից գոյանում է այնքան փող, որ ընկերութիւնը կարողանում է ոչ միայն վնասւածներին վարձատրել, այլ և լաւ օգտուել:

Ճիշտն ասած, եթէ մի քիչ մտածենք, ապա կտեսնենք, որ ապահովագրութեան մէջ մարդկանց մի մասն օգնում է միւսներին դժբաղդութեան դէպքում: Ապահովագրւածներից նորանք, որոնք չեն տուժում հրդեհներից, օգնում են իրենց վնասներով վնասւածներին: Ապահովագրող ընկերութիւններն այդպիսով միջնորդի դեր են խաղում, հաւաքելով վնասները մի մասից և բաժանելով միւսի մէջ: Այն ապահովագրութիւնը, որտեղ ապահովագրողների մէջ միջնորդ է հանդիսանում օրէէ մասնաւոր ընկերութիւն, կոչւում է մասնաւոր ապահովագրութիւն: Բայց ապահովագրողները պայ-

մանաւորելով միմեանց հետ, կարող են կառավարւել առանց մասնաւոր միջնորդների: Նօքա կարող են իրենց միջից ընտրել մի քանի անդամներ՝ որոնք և կ'վարեն ամբողջ գործը: Այդպիսի ապահովագրութիւնը կոչւում է փոխադարձ: Վերջապէս կայ նաև մի երրորդ ճանապարհ: Ամբողջ գործը կարող է կենտրոնանալ պետութեան կառավարութեան ձեռքում: Նա կարող է իւր պաշտօնեանների կամ ազգաբնակչութեան կողմից ընտրւածների միջոցով կազմակերպել ապահովագրութիւն այս կամ այն դժբաղդութեան դէմ: Այդ դէպքում ապահովագրութիւնը կոչւում է պետական:

Գերմանիայում բանւորների ապահովագրութիւնը պետական է և կատարւում է կառավարութեան մասնակցութեամբ: Կառավարութիւնն ստիպում է ապահովագրել բոլոր այն բանւորներին, որոնք օրէնքի համաձայն ենթակայ են ապահովագրման: Կառավարութիւնն է հսկում ապահովագրական ընկերութիւնների գործերի վերայ և որոշ դէպքերում ինքը մասնակցում վարչութեանը: Վերջապէս նա իւր կողմից իւրաքանչիւր տարի որոշ գումար է տալիս ապահովագրւածների օգտին:

Ի՞նչ է տալիս գերմանական բանւորութեանը պետական ապահովագրութիւնը:

Գերմանական բանւորն ապահովւած է հիւանդութեան և դժբաղդութիւնների դէպքում (մահացու վէրք աշխատանքի ժամանակ, անդամալուծութիւն). նաև այն ժամանակ, երբ ծերացել կամ անընդունակ է դարձել աշխատելու:

Հիւանդութեան դէպքում նա ստանում է ձրի բժշկական օգնութիւն, ինչպէս նաև դրամական նպաստ 'ի հարկէ, երբ Հիւանդութիւնը զրկում է նրան աշխատելու ընդունակութիւնից: Ամբողջ կէս տարի նա կարող է օգտւել ձրի բժշկական օգնութեամբ և նպաստով: Նպաստը հաւասար է նորա սովորական աշխատավարձի կիսին: Իսկ եթէ բանւորը տեղաւորւած է Հիւանդանոցում, ապա նորա ընտանիքը ստանում է նպաստ՝ հաւասար նորա աշխատավարձի մի քառորդին: Այդպիսով գերմանական բանւորը Հիւանդութեան դէպքում չի ընկնում այնպիսի անելանելի դրութեան մէջ, ինչպէս ռուս բանւորը: Ի հարկէ, իւր օրավարձի կիսին հաւասար այդ նպաստը մի բաղդաւորութիւն չէ բանւորի համար, բայց, այնուամենայնիւ նա փրկում է նորան քաղցից և ծայրայեղ կարիքից: Գործարաններում աշխատող կանայք ծնելուց յետոյ վեց շաբաթ շարունակ Հիւանդներին հաւասար նպաստ են ստանում: Երբ Հիւանդ բանւորը մեռնում է, ապա ընտանիքն ստանում է կառավարութիւնից քսան օրւայ աշխատավարձ որպէս թաղման ծախս:

Ապահովագրւած Հիւանդներին բժշկելու և նոցա նպաստ տալու համար կան յատուկ, այսպէս կոչւած Հիւանդանոցային զրամարկղներ, որոնց վարիչները երկու երրորդ մասը կազմում են բանւորների ներկայացուցիչները, իսկ մի երրորդը տէրերի:

Հիւանդանոցային զրամարկղները հաւաքում են անդամավճար բանւորներից և գործարանատէ-

րերից, վարձում են բժիշկներ, համաձայնութեան են զալիս գեղատանների և Հիւանդանոցների հետ, տալիս են զրամական նպաստ Հիւանդներին և նոցա ընտանիքներին: Եթէ զրամարկղների կապիտալն աճում է, ապա նոքա իրաւունք ունին ընդարձակելու նաև իրենց գործունէութիւնը և տալ բանւորներին աւելի, քան որ օրէնքում նախատեսուած է:

Նոքա կարող են ապահովագրութիւնը տարածել նաև բանւորների ընտանիքների վերայ, կարող են նպաստի չափը մեծացնել մինչև օրավարձի $\frac{3}{4}$ և այլն: Եւ գերմանական շատ զրամարկղներ օգտւեցին այդ իրաւունքից, այնպէս որ այդ զրամարկղներում ապահովագրւած բանւորների դրութիւնն աւելի լաւ է:

Առանձնապէս բանւորի համար մեծ ապահովութիւն է, երբ ապահովագրութիւնը տարածւում է նաև նորա ամբողջ ընտանիքի վերայ: Ինչպէս կինը, նոյնպէս և զաւակները Հիւանդութեան դէպքում չեն ենթարկւում բաղդի քմահաճոյքին, այլ ստանում են գեղեցիկ բժշկական օգնութիւն:

Եթէ բանւորն աշխատանքի ժամանակ անդամալուծ է դառնում, զրկւելով միանգամայն աշխատելու հնարաւորութիւնից, ապահովագրական ընկերութիւնը տալիս է նորան մինչև 'ի մահ կենսաթոշակ, հաւասար իւր աշխատավարձի $\frac{3}{4}$ մասին: Եթէ ստացած վէրքը մահացու է, ապա կենսաթոշակը ստանում են բանւորի կինն ու երեխաները: Այս վերջին դէպքում ընտանիքն ստանում է կենսաթոշակ մեռած բանւորի օրավարձի $\frac{3}{5}$ -ի

Հաշուփ: Այսպէս օր: Եթէ նա ստանում էր ամսական 30 ր., ապա ընտանիքը կ'ստանայ կենսաթոշակ ամսական 18 ր.: Կնոջը տրուում է կենսաթոշակ մինչ իւր մահը, կամ նոր ամուսնութիւնը, իսկ երեխաներին մինչև 15 տարեկան հասակը:

Իժբաղդ պատահարներից զատ, կան նաև ուրիշ շատ պատահաւորներ, որոնք դարձնում են բանւորին աշխատելու անընդունակ: Մենք արդէն վերեւում չիշեցինք այն բազմաթիւ հիւանդութիւնների մասին, որոնց ենթակայ է բանւորը և որոնք նորան ինվալիդ են դարձնում: Մենք տեսանք նաև, թէ որքան ծանր ու անելանելի է ռուս բանւորի դրութիւնը նման հանդամանքներում: Նորան սպառնում է մուրացկանութիւն, կամ մահ՝ սովից: Գերմանական բանւորը չի վախենում այդ ուրևականներից: Հիւանդութիւնից և դժբաղդութիւններից զատ, նա ապահովւած է նաև ինվալիդութեան ժամանակ:

Կէս տարի հիւանդ բանւորին խնամելուց յետոյ հիւանդանոցային զբամարկիղներն ընդհատում են իրենց օգնութիւնն հիւանդին և նորա ընտանիքին, ու վերջիններս յանձնւում են ապահովագրական հաստատութիւնների խնամքին, որոնց մէջ նա ապահովագրւած է: Այդ ապահովագրական հաստատութիւնները կարող են շարունակել բանւորի բժշկութիւնը, եթէ դեռ ևս յոյս կայ, որ նա առողջանայ և վերականգնէ իւր աշխատունակութիւնը: Եթէ յոյս չկայ և բանւորն անդարձ կերպով կորցրել է իւր առողջութիւնը, դառնալով

ինվալիդ, ապա նորան տարեկան նշանակւում է որոշ գումար — այսպէս կոչւած ռենտա, որի քանակութիւնը կախւած է այն հանգամանքից, թէ որքան էր աշխատում բանւորը, երբ նա ընդունակ էր աշխատելու, նաև թէ մինչ հիւանդանալը որքան ժամանակ էր ապահովագրւած: Միջին թւով, ռենտան տարեկան հաւասար է մօտաւորապէս 50—100 ր.:

Եթանասուն տարեկան դառնալուց յետոյ բանւորն ստանում է ճերութեան ռենտա, — անկախ նորանից, կարող է նա աշխատել թէ ոչ: Ծերութեան կենսաթոշակը մօտաւորապէս նոյնքան է, որքան ինվալիդութեան ռենտան:

Այժմ հարց է, թէ բանւորների բժշկութեան, նպաստի ու կենսաթոշակի այդ զուժարները որտեղից են գոյանում: Իսկ այդ զուժարներն իրօք հսկայական են:

1901 թ., օրինակ, գերմանական բոլոր ապահովագրական ընկերութիւնները բանւորների ապահովագրման համար ծախսել էին մօտ 200 միլիոն ռուբլի:

Եթէ հաշւենք նախկին վեց տարւայ ծախքերը, այսինքն 1885 թւից մինչ 1901 թ., ապա կստացւի մի վիթխարի թիւ, աւելի քան մէկ և կէս միլիարդ ռուբլի:

Այդ ահագին ծախսերը ծածկւում են երեք աղբիւրներից ստացւած եկամուտներով: Մի մասը վճարում են իրենք բանւորները, միւսը՝ ձեռնար-

կողները, երրորդը — պետութիւնը: Ո՞րքան է վճարում այդ երեքից իւրաքանչիւրը:

Ամենից շատ վճարում են ձեռնարկողները, գործարանատէրերը, (մօտ 45%), մի քիչ պակաս՝ բանւորները (38%): Մնացածը լրացնում է պետութիւնը, որը հաւասար է մօտաւորապէս բոլոր եկամուտների $1/16$ մասին:

Այստեղից պարզ է, որ վճարների ծանրութեան մեծ մասն ընկնում է ձեռնարկողների վերայ: Այդպէս էլ, ի հարկէ, պէտք է լինի, որովհետեւ բանւորների հիւանդութեան, դժբաղդ պատահարների և կանուխ անընդունակութեան պատճառը, զլխաւորապէս կախած է գործարանային աշխատանքի ծանր պայմաններից — երկար բանւորական օրից, չնչին վարձատրութիւնից և վատ բնակարաններից. ուրիշ խօսքով, նորա համար, որ գործարանատէրերը աշխատում են բանւորի աշխատանքից ըստ կարելւոյն շատ օգտելի: Գերմանական բանւորներն ենթադրում են, որ գործարանատէրերն իրանց շատ քիչ են վարձատրում և բանւորների լուծը շատ ծանր է:

Հիւանդութեան դէմ ապահովադրւած բանւորը պէտք է վճարէ շաբաթական իւր աշխատանքի (շաբաթական 1-ից մինչև 4%): Այսպէս, եթէ նա աշխատում է շաբաթական 10 բուրլի, ապա նորա վճարը կլինի 10-ից մինչ 40 կոպ., հետևապէս, տարեկան 5-ից մինչև 20 բուրլի: Իսկ գործարանատէրը, որի մօտ նոյն բանւորն աշխատում է, վերջինիս համար վճարում է երկու անգամ աւել-

լի քիչ, այսինքն՝ 2 ր. 50 կ.-ից մինչև 10 ր.: Այնպէս է դուրս գալիս, որ կարծես բանւորը երկու անգամ աւելի է մեղաւոր իւր հիւանդութիւնների համար, քան գործարանատէրը: Ի հարկէ, իրօք բանւորների հիւանդութեան մեղքը զլխաւորապէս ընկնում է գործարանատէրերի վերայ:

Դժբաղդ պատահարների դէմ ապահովադրւելու համար բանւորները ոչինչ չեն վճարում. ամբողջ ծախքն ընկնում է գործարանատէրերի վերայ: Այդ էլ, ի հարկէ, բոլորովին բնական է: Տարօրինակ կլինէր պատասխանատուութիւնը ձգել բանւորի վերայ նորա համար, որ աիրոջ մեքենան է կտրում նորա ձեռքը, կամ ջախջախում զլուխը:

Բայց բանւորները ստիպւած են վճարել նաև ինվալիդութեան դէմ ապահովադրւելու համար: Այդ տուրքի մեծութիւնը նոյնպէս կախւած է աշխատավարձի չափից և միջին թւով շաբաթական հաւասար է 3-ից մինչև 9 կոպէկի: Ընդհանրապէս բոլոր տեսակի ապահովադրութիւնների համար բանւորները վճարում են բաւական խոշոր դուժարներ: Նոյն 1901 թ., օրինակ, նորա վճարել էին մօտ 100 միլիօն բուրլի: Հետևաբար, գերմանական բանւորներն իրաւունք ունին ասելու, որ սեփական ապահովութեան մէջ բաւական զգալի մասնակցութիւն ունին:

6. Ապահովագրութեան առաւելութիւնները.

Այժմ եթէ մենք համեմատելու լինենք ռուս բանւորի դրութիւնը, որը հիւանդութեան դէպքում ապահովւած է միայն գործարանային բժշկութեան օգնութեամբ, գերմանական բանւորի պրութեան հետ, ապա հեշտ է նկատել, թէ ո՞րքան շատ են գերմանական բանւորի առաւելութիւնները:

Եւ որքան մենք խորը դիտենք գերմանական բանւորի կեանքը, այնքան աւելի մեզ համար ակնյայտ կլինի այն ահագին նշանակութիւնը, որն ունի ապահովագրութիւնը բանւորների համար:

Մենք արդէն տեսանք, որ որքան էլ լաւ կազմակերպւած լինի գործարանային բժշկութիւնը, նա չի կարող տալ բանւորին այն՝ ինչ նորա համար ամենազլխաւորն է, — օրավարձ ստանալ հիւանդութեան ամբողջ ժամանակամիջոցում:

Ապահովագրւած բանւորը չի վախենում քաղցից. հիւանդութեան դէպքում նա և իւր ընտանիքը ստանում են աշխատավարձի մի մասը:

Բացի դրանից, ոչ միայն մեր խղճուկ ռուսական գործարանային բժշկութիւնը, այլ և ամենազարգացած, ամենակատարեալ գործարանային բժշկութիւնն իսկ անկարող է բժշկել հիւանդացած բանւորին անորոշ, երկար ժամանակով: Գոյութիւն ունի մի սահման, որից այն կողմը բանւորը չի կարող օգտւել գործարանային բժշկութեամբ:

Մեզանում օրէնքի մէջ այդ մասին ոչ մի չի-

շատակութիւն չկայ. իրանք գործարանատէրերը սահմանել են երկու շաբաթ: Ճշմարիտ է, կառավարութիւնն ուղում է այդ կէտը որոշ չափով բարեփոխել: Պետական Խորհրդին ներկայացւած է մի նախագիծ, որի համաձայն հիւանդ բանւորը գործարանատիրոջ հաշուով կարող է բժշկւել չորս ամիս, եթէ նոյն իսկ պայմանագրի ժամանակն էլ անցած լինի:

Վնասակար դազերից և թունաւոր գոլորշուց ստացած երկարատե հիւանդութիւնների դէպքում, մտադրութիւն կայ նոյն իսկ չորս ամիսը դարձնել երկու տարի: Բայց այդ բոլորը դեռ ևս քիչ է բանւորի համար: Իսկ եթէ հիւանդութիւնը չորս ամսից աւելի տևէ, կամ թունաւորումը վերջնականապէս քայքայէ բանւորի առողջութիւնն ու նորան անընդունակ դարձնէ աշխատելու երկու տարի բժշկւելուց յետոյ, պարզ է, որ այդ դէպքերում նորան մուրացկանութիւնից փրկողը միայն ապահովագրութիւնն է, անընդունակութեան դէմ:

Այն բժշկական օգնութիւնը, որ տալիս են ապահովագրական հաստատութիւնները, անհամեմատ աւելի լաւ է, քան գործարանային բժշկական օգնութիւնը:

Հիւանդանոցային զրամարկղների վարչութեան երկու երրորդ մասը կազմում են բանւորների ներկայացուցիչները. այդ պատճառով զրամարկղներն աշխատում են բանւորին տալ ամենալաւը, ինչ որ կարելի է առձեռն միջոցներով: Հիւանդանոցային զրամարկղներն համաձայնութիւն են կայացնում

որոշ տեղի բոլոր բժիշկներին, կամ նոցա մեծամասնութեան հետ: Բժիշկները ստանում են զբամարկղից ամեն մի հիւանդ բանւորի համար որոշ վարձ: Տիւրանդուլութեան դէպքում բանւորը կարող է ուզած բժշկին դիմել: Նա պարտաւոր չէ անպատճառ միշտ բժշկւելու միւսնոյն բժշկի մօտ, ինչպէս գործարաններում: Գործարանային բժիշկը կարող է լինել անուշադիր, անբարեխիղճ, թերուս, — իսկ բանւորներն այնուամենայնիւ ստիպւած են նորա մօտ բժշկւելու: Ընդհակառակը, հիւանդութեան դէմ ապահովագրւելուց յետոյ, բանւորը կարող է ընտրել այն բժշկին, որն իրան դուր է գալիս, որին նա հաւատում է և հնարաւորութիւն կունենայ բժշկւելու ամենալաւ մասնագէտի մօտ:

Վերջապէս գործարանային բժիշկը կախումն ունի գործարանատիրոջից, որովհետեւ մտել է նորա մօտ ծառայութեան և ստանում է նորանից առճիկ: Բաւական է, որ նա չափազանց ուշադիր լինի դէպի հիւանդ բանւորները, օրինակ, շուտ-շուտ ազատէ նոցա աշխատանքից, բաւական է որ նա գործարանատիրոջից նոր ծախսեր պահանջէ հիւանդանոցի ու դեղերի համար, — ահա անբաւականութեան ցօյցեր գործարանատիրոջ կողմից, կամ նոյն իսկ արձակումն պաշտօնից: Իսկ այն բժիշկը, որին դիմում է ապահովագրւած բանւորը, բոլորովին անկախ մարդ է: Նա կարող է համարձակ ու պատուով ասել այն, ինչ որ մտածում է, և պահանջել ամեն ինչ, որ իւր կարծիքով հիւանդի օգտի համար անհրաժեշտ է:

Իրենց անդամների բժշկութեան համար, հիւանդանոցային զբամարկղները համաձայնութեան են դալիս հիւանդանոցների և տեղական այլ բժշկական հաստատութիւնների հետ: Եթէ հիւանդը կարիք ունի մասնագիտական հիւանդանոցի (հիւանդութեան տեսակի համաձայն), նորան տեղաւորում են այնտեղ:

Որքան էլ որ լաւ կազմակերպւած լինի գործարանային հիւանդանոցը, այնուամենայնիւ նա անկարող է յարմարելու բոլոր հիւանդութիւնների բուժմանը: Մի քանի հիւանդութիւնների համար անհրաժեշտ է ունենալ առանձին մասնագիտական հիւանդանոցներ: Գոյութիւն ունեն, օրինակ՝ հիւանդանոցներ՝ նեարդային հիւանդների, ալկօհօլիկների (արբեցողների), թոքախտաւորների համար, և այլն: Տիւրանդանոցային զբամարկղները համաձայնութիւն են կայացնում այդպիսի բժշկական հաստատութիւնների հետ և հիւանդ բանւորներին հնարաւորութիւն տալիս այնտեղ բժշկւելու: Այդպիսով հիւանդ բանւորն ստանում է այն ամենը, ինչ որ ներկայումս կարող է տալ բժշկական գիտութիւնը:

Գալով դեղերին և ամեն կարգի բժշկական միջոցներին, պէտք է ասել, որ հիւանդանոցային զբամարկղներն անհամեմատ աւելի են տալիս, քան ամենալաւ հիմքերի վրայ դրւած գործարանային բժշկութիւնը: Ի հարկէ զբամարկղներն էլ ստիպւած են չափաւորելու. բայց զոնէ այն միջոցները, որ ունին իրենց արամադրութեան տակ, առանց

խնալելու գործադրում են, որպէսզի բանւորին տան ամեն մի հնարաւորութիւն իւր առողջութիւնը վերականգնելու համար: Ի հարկին բանւորը կարող է բժշկել հանքային ջրերում և լողարաններում, կարող է ստանալ բինտեր, բանդաժներ (կապեր՝ մարմնի զանազան մասերն ամրացնելու համար), արհեստական ատամներ, ակնոցներ և այլն:

Իսկ մեր խեղճ ռուս բանւորը երապել անգամ չի համարձակւի հանքային ջրերի կամ արհեստական ատամների մասին:

Ի հարկէ, մենք սրանով չենք ուզում ասել, որ բոլոր զերմանական բանւորները հնարաւորութիւն ունին զնալու հանքային ջրերը և կամ ստանալու բժշկական օգնութեան թանկ տեսալները: Ի հարկէ, միայն ամենայառաջադիմական և ամենահարուստ կասսաները կարող են իրենց թույլատրել այդպիսի «շռայլութիւն», այն էլ ամենածայրայեղ դէպքում:

Բայց այստեղ կարևոր է այն սկզբունքը, որ նոքա թէև երբեմն, բայց յամենայն դէպս օգտւում են բժշկութեան այդ միջոցներով, որ հանքային ջրերում բժշկւելը, կամ արհեստական ատամներ ունենալը յամենայն դէպս որոշ դէպքերում նոցա մատչելի է: Կարևորն այն է, որ ապահովագրութեամբ կարելի է ունենալ այդպիսի կտարեալ բժշկական օգնութիւն: Իսկ երբ կարելի է, հնարաւոր բան է, ապա ժամանակի ընթացքում քանի զնայ աւելի լայն չափերով կ'տարածւի: Լաւ գրամարկրդների օրինակը կ'գրաւէ իւր յետևից մնացած գրամ-

արկղները, և այն, ինչ այսօր բացառութիւն է, վաղը կ'դառնայ օրէնք:

Գործարանային բժշկութեան մէջ գործն այդպիսի կազմակերպութիւն չի կարող ունենալ, քանի որ գտնուում է գործարանատէրերի ձեռքում: Որքան էլ որ օրէնքը խիստ լինի գործարանատէրերի նկատմամբ, այնուամենայնիւ երբէք չի կարող պահանջել նոցանից բժշկութեան այդպիսի թանկ նստող միջոցներ: Եւ եթէ գտնւի մի հատիկ բարեսիրտ գործարանատէր, որ պատրաստ լինի տալու իւր բանւորներին աւելին, քան որ օրէնքը պահանջում է, այնուամենայնիւ նորա օրինակը միւս գործարանատէրերին չի զրաւի:

Այդպիսով, ըստ իւր էութեան գործարանային բժշկութիւնը չի կարող հասնել բժշկական օգնութեան այնպիսի բարձրութեան, որին կարող է հասնել բանւորների ապահովագրութիւնը:

Բանւորների առողջութիւնը պահելու տեսակէտից ահազին դեր է խաղում նաև ապահովագրութիւնը ինվալիդութեան, կամ անընդունակութեան դէմ: Թէև այդ ապահովագրութեան գլխաւոր նպատակն է օգնել նոցա, որոնք արդէն զրկւել են առողջութիւնից, զարձել են գործելու համար անընդունակ՝ ինվալիդ, բայց նա միջոցներ է ձեռք առնում հնարաւորութիւն տալու բանւորներին, ըստ կարելւոյն երկար պահելու առողջութիւնն և աշխատունակութիւնը:

Առանձնապէս շատ բան են արել ապահովագրական հաստատութիւնները թորախողաւորների

վերաբերմամբ: Այս հարցի վերայ արժէ մի քիչ մանրամասն խօսել, որովհետեւ նախ որ թորախտը բանւոր դասակարգի ամենատարածւած հիւանդութիւններից մէկն է, և երկրորդ՝ որ նորա դէմ վարած կռիւր գերմանական ապահովագրական ընկերութիւնների պատմութեան ամենափառաւոր էջերից մէկն է կազմում:

Պէտք է ասել, որ թորախտը վերին աստիճանի ձգձգւող և միևնույն ժամանակ խարդախ հիւանդութիւն է:

Խարդախ է նա նորանով, որ մարդուն մօտենում է բոլորովին աննկատելի կերպով, քայքայում է նորա առողջութիւնը շատ դանդաղ, այնպէս որ հիւանդը երկար ժամանակ չի իմանում, թէ իրան որպիսի վտանգ է սպառնում: Ամբողջ ամիսներ, երբեմն նոյն իսկ տարիներ կարող է մարդ աշխատել, առանց իմանալու, որ իւր կրծքում թորախտ է բուն դրել:

Ճշմարիտ է, նա հաղում է, իրան փոքր ինչ թոյլ է գդում, երբեմնակի քրտնում է զիշերները և այլն, բայց այդ բոլորը չեն զրկում նորան հնարաւորութիւնից սովորական աշխատանքը կատարելու:

Եւ բանւոր մարդը, որ սովորել է աշխատել չարքաշութեամբ, շարունակում է իւր գործը, մինչև որ ուժասպառ եղած անկողին է գլորւում: Եւ երբ թորախտն այնքան է զարգացել, որ հիւանդը պէտք է պառկի, նա չաճախ դառնում է անբուժելի:

Եւ ուրեմն, այն ժամանակ, երբ հիւանդը

վնուում է բժշկւել, հիւանդութիւնն արդէն այնքան է զարգացել, որ բժշկութիւնը մնում է անհետևանք:

Որպէսզի կարելի լինի թորախտը բժշկել, պէտք է սկսել հէնց սկզբից, երբ նա դեռ ևս արմատներ չէ ձգել: Դա առաջին անհրաժեշտ պայմանն է: Երկրորդ պայմանն այն է՝ որ բժշկութիւնը լինի հիմնաւոր և տևական: Թորախտից բժշկւելու համար բաւական չէ միայն ընդունել ինչ-ինչ կաթիլներ կամ փոշիներ, — անհրաժեշտ է որոշ ժամանակամիջոցով թողնել աշխատանքը և առհասարակ փոխել կեանքի պայմանները — բնակարանը, օդը և սնունդը:

Այժմ թորախտաւոր հիւանդների համար կան առանձին հիւանդանոցներ, որոնք կոչւում են սանատորիաներ կամ առողջավայրեր: Հիւանդները մնում են այդ հիւանդանոցներում սովորաբար մի քանի ամիս. նոցա լաւ կերակրում են, հնարաւորութիւն են տալիս շնչելու մաքուր օդ, բժշկում են, և այլն:

Հիւանդները իրենց հիւանդութեան սկզբում տեղաւորւելով սանատորիայում, ընդհանրապէս 3—5 ամսից յետոյ առողջանում են և նորից դորժ սկսում: Եթէ միառժամանակից յետոյ հիւանդութիւնը կրկնւում է, ապա հիւանդներին նորից տեղաւորում են սանատորիայում: Մէկ, երկու, երբեմն երեք անգամ կրկնւելուց յետոյ թորախտը շատ դէպքերում բժշկւում է:

Բայց ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ

այդ բժշկութիւնը շատ թանկ է նստում: Ո՞րտեղից ձեռք բերէ բանւորը բժշկութեան միջոցներ: Եւ ահա գերմանական բանւորին օգնութեան է համնում ինվալիդական ապահովագրութիւնը: Ապահովագրական ընկերութիւններն հաշել են, որ նոցա աւելի ձեռնտու է բանւորներին իր ժամանակին հնարաւորութիւն տալ բժշկելու սանատորիաներում, քան սպասել, որ նոքա դառնան աշխատելու անընդունակ և ստանան ինվալիդային ռենտա:

Ապահովագրական ընկերութիւնները հիմնել են բազմաթիւ գեղեցիկ սանատորիաներ, ամեն կարգի չարմարութիւններով, ինչ որ գիտութեան կողմից ճանաչւած է անհրաժեշտ՝ թոքախտաւոր հիւանդներին բժշկելու համար: Եւ ամեն մի գերմանական բանւոր սկսող թոքախտի առաջին իսկ նշաններից տեղաւորւում է նման սանատորիաներից որեւէ մէկում, մինչև իւր առողջանալը: Նորա ընտանիքն, այդ ժամանակ, ի հարկէ, ստանում է նպաստ:

Վերջին ութ տարում գերմանական սանատորիաներում բժշկւել են 100 հազարից աւելի թոքախտաւոր հիւանդներ: Նոցա բժշկութեան համար ապահովագրական ընկերութիւնները ծախսել են մօտ 15 միլիոն ռուբլի: Միջին թւով իւրաքանչիւր բանւոր սանատորիայում մնում էր մօտաւորապէս 2¹/₂ ամիս: Եւ ոչ թէ հարիւրաւոր, այլ հազարաւոր բանւորներ փրկւել են ուղղակի մահից, շնորհիւ այդ բժշկութեան:

Թոքախտից զատ, կան և ուրիշ հիւանդու-

թիւներ, որոնցից, նոյնպէս իր ժամանակին բժշկելով միայն, կարելի է ինվալիդութիւնից փրկել մարդուն: Ապահովագրական ընկերութիւններն այդ դէպքերում էլ զալիս են բանւորին օգնելու: Նոքա բանւորներին ջրերն են ուղարկում. եթէ կարիք կայ նոյնիսկ արտասահման, տեղաւորելով նոցա մասնազիտական հիւանդանոցներում, տալիս են ամեն կարգի զործիքներ և չարմարութիւններ:

Ապահովագրական ընկերութիւնները համոզւել են, որ որքան շուտ բժշկւեն ապահովագրւած հիւանդները, այնքան շուտ կ'վերականգնի նոցա աշխատունակութիւնը, և այնքան էլ, նշանակում է, ձեռնտու է հէնց իրեն ապահովագրական ընկերութեան համար:

7. Գերմանական ապահովագրութեան թերութիւնները.

Պէտք է ասել, սակայն, որ գերմանական ապահովագրութիւնն էլ, իւր առաւելութիւններով մէկտեղ, ունի մի շարք խոշոր պակասութիւններ: Եւ գերմանական բանւորները թէ մամուլի մէջ, թէ իրենց ժողովներում և թէ պառլամենտում անընդհատ մատնացոյց են անում այդ թերութիւնների վերայ և պահանջում նոցա վերացումը:

Բանւորական ապահովագրութիւնն էլ կարող է լինել թէ լսւ, թէ վատ: Եւ որպէսզի պարզ

լինի, թէ որպիսի ապահովագրութիւնն է լաւագոյնը, մենք մանրամասն կանգ կառնենք գերմանական պետական ապահովագրութեան թերութիւնների վերայ:

Այդ ապահովագրութեան թերութիւններից մէկը, ինչպէս վերէն ակնարկեցինք, այն է, որ բանւորները ստիպւած են շատ վճարել: Մենք արդէն տեսանք, որ բանւորը տալիս է իւր ամբողջ աշխատանքի 4⁰/₁₀: Եթէ, բանւորը տարեկան աշխատում է 500 ռ., ապա վճարելու է 20 ռ., 600 — 24 ռ., 720 — 28 ռ. և այլն: Իոքա բուրն էլ բաւական զգալի գումարներ են: Ապահովագրւած բանւորները տարեկան տասնեակ միլիոններ են տալիս:

Գործարանատէրերն այդ գումարի կէսն են միայն վճարում: Այն ինչ արդարութիւնը պահանջում է, որ եթէ ոչ բոլորը, ապա վճարների գոնէ մեծ մասն ընկնէր ձեռնարկողների վերայ: Չէ՞ որ բանւորների առողջութեան գնով են զիջում նոցա եկամուտները. ապա՞ ուրեմն նոքա էլ պարտաւոր են վերականգնելու այդ առողջութիւնը:

Եթէ փչանում է մեքենան, կամ գործարանի վերանորոգութեան կարիք կայ, նա այդ բոլորն անում է իւր հաշւով: Ինչո՞ւ չպէտք է վերանորոգելի նոյն գործարանատիրոջ հաշւով նաև բանւորի առողջութիւնը: Այդպիսով, առաջին պահանջը, որ պէտք է զնել բանւորական ապահովագրութիւն կազմելիս այս է. վճարների մեծ մասը պէտք է ընկնի ձեռնարկողների վերայ:

Գերմանական ապահովագրութեան երկրորդ թերութիւնը վերաբերում է, զխաւորապէս, ինվալիդ բանւորի ապահովագրութեանը: Եթէ հիւանդութեան դէմ ապահովագրելով բանւորը վճարում է շատ, ինվալիդութեան դէմ ապահովագրւելով, ընդհակառակը, ստանում է շատ քիչ: Բանւորն ինվալիդ դառնալով տարեկան ստանում է 50-ից մինչև 100 ռ., — միջին թւով՝ 70 ռուբլի: Հարց է, ի՞նչպէս կարելի է գոյութիւն պահել այդ փողով: Աշխատանքի անընդունակ բանւորի համար, որ սովորաբար ունի մի քանի անդամներից բաղկացած ընտանիք, հնարաւոր բան է ապրել ամսական 4—8 ռուբլիով:

Ռուսական բանւորի համար, որ ստիպւած է նման դէպքերում մուրալ, ՚ի հարկէ, ամսական 8 ռ. օգնութիւնը բաւական մեծ կարող է թւալ: Գերմանական բանւորը սակայն համեմատած ռուսականի հետ, բաւական առաջ է գնացել. նա իրեն իրաւունք է համարում պահանջելու, տանելի գոյութիւն, նոյն իսկ ինվալիդութեան դէպքում: Մեղաւոր է միթէ նա, որ աշխատանքի վերայ կորցրել է իւր առողջութիւնը: Բացի դրանից գերմանական բանւորն ընդհանրապէս աւելի լաւ է ապրում, քան ռուսականը. նա սովորել է մեծ շարժարութիւնների, և մեծ էլ պահանջներ ունի: Նորա համար ամսական 8 ռուբլու կեանքը հաւասարագոր է մուրացկանութեան: Ահա՞ թէ ինչու նա ասում է կառավարութեան և գործարանատէրերին. «Շատ մի պարծենաք ձեր բանւորական

ապահովագրութիւններով: Մի կարծէք, թէ մեզ
 ընդմիշտ բաղդաւոր էք դարձրել: Մի՛ ասէք մեզ,
 թէ դուք բանւորների օգտին մեծամեծ զոհաբերու-
 թիւններ էք անում: Ապահովագրութիւնը մրտ-
 ցնելուց առաջ էլ դուք ստիպւած էիք աղքատների
 ապրուստը հոգալու: Աղքատ բանւորներով լցւած
 էին քաղաքները և դուք հարկադրւած էիք նոցա
 կերակրելու: Այժմ դուք ողորմութեան փոխարէն
 տալիս էք ինվալիդային ռենտա: Բայց նա շատ էլ
 չէ նորանից, որ առաջ ստանում էր մուրացկանը:
 Բացի այդ, նորա մի մասն էլ հաւաքւում է մեր
 զրպաններից, քանի որ մեր ամբողջ կեանքի ընթաց-
 քում վճարում ենք ապահովագրական հաստատու-
 թիւններին: Մենք պահանջում ենք իսկական ապա-
 հովութիւն ինվալիդութեան դէպքում. այսինքն՝
 որ ինվալիդը ստանալ իւր սովորական աշխատա-
 վարձն եթէ ոչ ամբողջութեամբ, զոնէ նորա զգալի
 մասը»:

Գերմանական ապահովագրութեան երրորդ
 թերութիւնը նրանումն է, որ ապահովագրութեան
 զործերը վարելիս, բանւորի ծայնը չնչին նշանակու-
 թիւն ունի:

Ճշմարիտ է. հիւանդանոցային կասսաների
 վարչութեան մէջ բանւորներն երկու անգամ աւելի
 են տէրերի ներկայացուցիչներից, բայց չպէտք է
 մի րոպէ մոռանալ, թէ ի՞նչպիսի ճնշման տակ է
 զտնւում այն բանւորը, որ տիրոջ կողքին նստած
 կառավարում է վարչութեան զործերը: Տէրը նրս-
 տած խէթ-խէթ նայում է բանւորին և ամեն մի

հակառակութեան համար նրան կարող է արժակել
 ծառայութիւնից: Այդ պատճառով էլ հիւանդանո-
 ցային զբամարկիւններն այնպէս չեն գործում, ինչպէս
 որ պահանջում են բանւորի շահերը:

Բացի այդ՝ հիւանդանոցային կասսաների գոր-
 ծունէութեանը հետևում է նաև կառավարու-
 թիւնը: Իսկ կառավարութիւնը Գերմանիայում,
 ինչպէս նաև ամեն տեղ, բռնում է ձեռնարկողնե-
 րի կողմը: Այդ պատճառով էլ յաճախ զբամարկը-
 ների որոշումները չեն հաստատւում կառավարու-
 թեան կողմից նորա համար, որ արւել են ձեռ-
 նարկողների կամքին հակառակ:

Ձեռնարկողները սովորաբար խիստ հետամուտ
 են խնայողութեան. նոքա շատ վախենում են, որ
 զբամարկիւնները մեծ արտօնութիւններ տան ապա-
 հովագրւած բանւորներին: Ահա այդ պատճառով
 էլ ամեն մի քայլ, որ արւում է կասսաների գոր-
 ծունէութիւնն ընդարձակելու համար, տէրերի և
 կառավարութեան կողմից ընդդիմադրութեան է
 հանդիպում: Բնական է, որ բանւորները պահանջեն
 իշխող դեր հիւանդանոցային կասսաների գործե-
 րում:

Գերմանիայի բանւորական ապահովագրութեան
 խոշոր թերութիւններից մէկն էլ այն է, որ ան-
 նշան հոգացողութիւն է արւում բանւորների այ-
 րիների և որբերի նկատմամբ: Եթէ բանւորը մեռ-
 նում է դժբաղդ պատահարից, ապա նորա որբա-
 ցած ընտանիքը, ինչպէս վերևում տեսանք, ստա-
 նում է կենսաթոշակ:

Բայց եթէ բանւորը մեռնում է ոչ թէ զբ-
բաղըութեան դէպքում, այլ սովորական հիւան-
դութեամբ, օր. թոքախտից — նորա ընտանիքն
ստանում է միայն թաղելու ծախսը: Այն ինչ այրու-
ւորբերի համար բոլորովին միեւնոյնն է, թէ իրենց
կերակրողն ու պահողը ինչո՞ւն է մեռել:

Իրօք՝ ի՞նչ տարբերութիւն դժբաղդ պատա-
հարի և սովորական հիւանդութեան մէջ: Ճարբե-
րութիւնը միայն այն է, որ դժբաղդ պատահարից
առողջութիւնն չանկարծակի է կորցւում, իսկ սո-
վորական հիւանդութիւնների ժամանակ՝ զանազա:

Առաջին դէպքում բոլորի համար պարզ է,
որ բանւորը կորաւ իւր աշխատանքի պայճաննե-
րից, երկրորդ դէպքում այդ այնքան էլ պարզ չէ:
Բայց զիտութիւնն արդէն ապացուցել է, որ բան-
ւորների հիւանդութիւնների մեծ մասը կախած է
աշխատանքի ծանր պայճաններից և որ, հետեա-
պէս, ամեն մի վաղաժամ մահ, հետեանք է գոր-
ծարանային դաժան աշխատանքի: Միեւնոյն չէ՞
արդեօք, մեքենան է կտրել նորա գլուխը, թէ ար-
հեստանոցի թունաւորւած օդը զրկել առողջու-
թիւնից: Ահա՛ թէ ինչո՞ւ բանւորական ապահովա-
գրութիւնը պարտաւոր է ապահովելու որբերին և
այրիներին բոլոր դէպքերում, անկախ այն հանդա-
մանքից, թէ ի՞նչ պատճառից գերեզման է մտել
ընտանիքին կերակրողը:

Վերջապէս գերմանական ապահովագրութեան
թերութիւններից մէկն էլ պէտք է համարել այն,
որ նա բոլոր բանւորների վերայ չի տարածւում:

Գիւղատնտեսական *) բանւորները հիւանդութեան
դէմ չեն ապահովագրւում. զուրկ են մնում նաև
տնային ծառայողները: Առևտրական բանւորները
չունին ապահովագրութիւն դժբաղդ պատահարնե-
րի դէմ:

Բանւորների համար զգալի է առանձնապէս
նաև այն, որ հիւանդութեան դէմ եղած ապահո-
վագրութիւնը չի տարածւում նոցա ընտանիքների
վերայ:

Ինչպէս չիշեցինք, հիւանդանոցային զրամարկը-
ները, եթէ ներում են միջոցները, կարող են օգնել
բանւորների կանանց և դաւակներին: Բայց որով-
հետև զրամարկըները զոյութիւն ունին միայն բան-
ւորների համար, այդ պատճառով էլ ընդհանրա-
պէս նորա հնարաւորութիւն չունին ընտանիքներին
օգնելու, և հարկ է լինում դրա համար նոր՝ լրա-
ցուցիչ տուրք նշանակել: Այդ աւելի ևս ծանրաց-
նում է բանւորների ապահովագրութեան լուծը:

Այդ իսկ պատճառով ապահովագրութիւն
կազմելիս պէտք է հաշւի առնել նաև բանւորների
կանանց և երեխաներին բժշկական օգնութեամբ
ապահովելու անհրաժեշտութիւնը:

*) Այս գրքից հրատարակելիս ես ՚ի նկատի ու-
նէի ոչ միայն գործարանային բանւորների ներկայ գրու-
թիւնը, այլ ընդհանրապէս բոլոր աշխատաւորների կա-
ցութիւնը: Ուրեմն, շատ ցանկալի է, որ գրքիցիս գաղա-
փարները լայն չափերով տարածւէին նաև միւս կար-
գի աշխատաւորների մէջ:

Եզրակացութիւն.

Մեր նպատակն էր ցոյց տալ բնթերցողին, թէ ի՞նչպէս պէտք է կազմակերպել բանւորների համար բժշկական օգնութիւն, որ նա լիովին բաւարարութիւն տայ նոցա շահերին:

Մենք տեսանք, որ բանւորների համար մասնաւոր բժշկների մօտ բժշկելն անմատչելի է, և որ հետեւապէս, բանւորների բժշկական օգնութիւնը պէտք է հաստատուած լինի հասարակական սկզբունքների վերայ:

Յետոյ մենք տեսանք, որ գործարանային բժշկութիւնը չի կարող բաւարարութիւն տալ բանւորներին, որովհետեւ նրանց մեծամասնութեանը հասցնում է թերի օգնութիւն, իսկ զգալի փոքրամասնութեանը, և ո՛չ մի օգնութիւն:

Իրենց ներկայ զրութեամբ, մեր քաղաքային և զեմաստվային բժշկութիւններն էլ չեն կարող գոհացնել բանւորներին:

Թէև ապագայում, մեր պետական կեանքի բնդհանուր պայմանների փոխելովը, անշուշտ կ'լաւանան նաև գործարանային, քաղաքային և զեմաստվային բժշկութիւնները, բայց չամենայն դէպս բանւորի ապահովութիւնն երբէք չի լինի բաւարար և կատարեալ, քանի որ չկայ ապահովագրութիւն՝ հիւանդութեան, գոբաղդութիւնների, ինվալիդութեան և ծերութեան դէմ:

Ընթերցողին բանւորական ապահովագրու-

թեան էութեան հետ ծանօթացնելու համար, մենք համառօտակի նկարադրեցինք, թէ ի՞նչպէս է զրրուած այդ հաստատութիւնը Գերմանիայում: Վերջապէս մէջ բերելով գերմանական ապահովագրութեան թերութիւնները, մենք ծանօթացանք այն զլխաւոր պահանջների հետ, որոնց պէտք է բաւարարութիւն տայ ապահովագրութիւնը, որպէսզի իսկապէս համապատասխանէ բանւորների կարիքներին և շահերին:

Մենք կ'կամենայինք մի անգամ էլ շեշտել, որ հիւանդութեան ժամանակ ամենակատարեալ ապահովագրութիւնն իսկ անկարող է արմատապէս լուծել բանւորի կեանքի և առողջութեան իսկական պաշտպանութեան հարցը: Իրօք. ենթադրենք, որ բանւորն ստանում է հիւանդութեան դէպքում ամենալաւ բժշկական օգնութիւնը, որպիսին հնարաւոր է ներկայումս, որ նա հիւանդութեան ժամանակ ստանում է իւր ամբողջ օրավարձը, որ ինվալիդն ապահովում է մինչ իւր կեանքի վերջին րոպէն լրիւ ունետայով (որ հաւասար է բանւորի աշխատավարձին), և որ բանւորի որբացած ընտանիքն էլ բոլոր դէպքերում կենսաթոշակ է ստանում: Այդ բոլորն 'ի հարկէ մեծապէս կ'բարելաւէին բանւորի զրութիւնը, բայց և այդպիսի կացութիւնն էլ, չամենայն դէպս, կունենար իւր տխուր կողմերը:

Խօսելով հիւանդ բանւորի բժշկութեան, ինվալիդների, որբերի և այլն ապահովութեան մասին, չպէտք է մոռանալ, որ այդ բոլոր հարցերի

դիմաց կանգնած են կենդանի, զգայուն, մտածող, և հետեւապէս, տանջւող մարդիկ: Հիւանդութիւնն ըստ ինքեան մի մեծ դժբաղդութիւն է: Որքան էլ որ լաւ բժշկեն հիւանդին, այնուամենայնիւ նա չի կարող ուրախանալ իւր հիւանդութեան վերաց: Որքան էլ որ լաւ ապահովւած լինի մեռած բանւորի ընտանիքը, այնուամենայնիւ ոչնչով չի կարելի վարձատրել կնոջն՝ ամուսնու, և զաւակներին՝ հոր կորստի փոխարէն: Նոյնպէս էլ իւր աշխատունակութիւնը կորցրած բանւորը ինվալիդային ունտա ստանալով, չի կարող ուրախանալ իւր դրութեամբ:

Մի՞թէ իսկապէս բաղդաւորութիւն է ապրել անբուժելի հիւանդութեամբ, լինել անընդունակ որևէ աշխատանք կատարելու, միշտ կարիք ունենալ ուրիշների խնամքին և օգնութեան:

Եւ վերջապէս ինվալիդը, թէկուզ նա լինի միլիոնատէր, ի՞նչպէս կարող է դո՞ս մնալ կեանքից:

Ո՛չ, ամենակատարեալ ապահովագրութիւնն իսկ դեռ ևս բաւական չէ: Պէտք է այնպէս անել, որ նա ամեն բոպէ ենթակալ չլինի հիւանդութիւնների, որ ամեն քայլափոխում նորա առողջութիւնը չքայքայւի, որ նորա կեանքն ըստ կարելոյն երկարի: Բաւական չէ միայն բանւորների հիւանդութիւնները բժշկել, պէտք է նաև այդ հիւանդութիւնների առաջն առնել: Վերևում արգէն յիշել ենք, թէ ի՞նչպէս կարելի է այդ անել: Պէտք է կրճատել բանւորական օրը, որպէսզի աշխատանքը չափազանց չյոգնեցնէ: Պէտք է արգելել

զիշերային աշխատանքը, ինչպէս նաև երեխաների և զեռահասների աշխատանքը:

Պէտք է շինել ընդարձակ և առողջ գործարանային շինութիւններ, որպէսզի աշխատելիս բանւորն թոյնով չկերակրւի: Խոնաւ, ցեխոտ և մութ գետնայարկների փոխարէն, պէտք է շինել բանւորական առողջ բնակարաններ:

Պէտք է մեծացնել աշխատավարձը, որպէսզի բանւորը կարողանայ ունենալ առողջ և սննդարար կերակուր, որպէսզի նա կարող լինի տաք հագնել: Պէտք է բանւոր-կանանց հնարաւորութիւն տալ պահելու և սնուցանելու առողջ զաւակներ: Բանւորին ուսում պէտք է տալ, որպէսզի նա ազատի առողջութեան համար վնասակար սովորութիւններից և նախապաշարուժներից: Մի խօսքով պէտք է բարելաւել բանւոր դասակարգի աշխատանքի և կեանքի բոլոր պայմանները:

Ներկայ պայմաններում, սակայն, բանւորի առողջութիւնը քայքայող բոլոր վնասակար պայմանները չի կարելի վերացնել: Քանի բանւորը բանւոր կ'մնայ, քանի նա կապրի իւր բանւորական ոյժի գնով, նորա առողջութիւնը միշտ էլ տուժելու է հազարաւոր վնասակար պատճառներից:

Ի՞նչը կարող է, արդեօք, փրկել բանւորին պարագութեան կամ անգործութեան սարսափներից: Որքան էլ որ լաւ զրւած լինի նորա կեանքն ու աշխատանքը, որքան էլ որ լաւ լինի ապահովւած հիւանդութեան և ինվալիդութեան դէմ, — այդ բոլորը կ'փոշիանան, հէնց որ նորան ծառայու-

Թիւնից կ'արծակեն և որպէս անպէտք իր փողոց կ'շարտեն:

Նորա համար ի՞նչ արժէք ունի 8 ժամուայ բանւորական օրը, քանի որ նա տեղ չունի մի ժամով իսկ իւր ոչժը գործադրելու: Ի՞նչ օգուտ ունի նա բանւորական ապահովագրութիւնից, երբ բոլորովին առողջ ու աշխատունակ լինելով, տանջւում է միայն նորա համար, որ չունի հնարաւորութիւն աշխատելու:

Բայց այդ հարցերի մանրամասն ուսումնասիրութիւնն ու լուծումը, թէ ե՞րբ են չքանալու երկրիս երեսից այդ ախուր երևոյթները, — ներկայ գրքոյկիս նպատակից դուրս է: Միայն այսքանը կարելի է ասել, որ կեանքի ներկայ պայմաններում էլ պէտք է ամեն կերպ բարեփոխել աշխատաւոր մասսաների զրութիւնը: Եւ այդ բարեփոխումներից մէկը՝ բանւորների ապահովագրութիւնն է:

Նկատողութիւն առողջապահական գիտելիքներ տարածող Պիրօզօվեան յանձնաժողովի կողմից.

Բանւորներին ամենալաւ բժշկական օգնութեամբ ապահովելու հարցի նկատմամբ, ոուս բժիշկներն ընդհանրապէս երկու կարծիքի են: Ոմանք, ինչպէս գրքոյկիս հեղինակը, կարծում են, որ ամենանպատակաւոր ձևը գերմանական ախպի հիւանդանոցային զրամարկդներն են:

Միւսները համոզւած են, որ գերմանական ախպի հիւանդանոցային կասսաներն ինքն ըստ ինքեան անկարող են լուծել ոուսաստանի աշխատաւոր մասսաների, բժշկական օգնութեամբ, ապահովելու հարցը, ՚ի նկատի ունենալով ոուսական կեանքի առանձնայատուկ կողմերը (մեծ տարածութիւններ, ցանցառ ազգաբնակութիւն, զիւղատնտեսական բանւորների մեծ բազմութիւն և այլն):

Այս վերջինների կարծիքով Ռուսաստանի հիւանդանոցային կասսաները սերտ յարաբերութեան մէջ են մտնելու քաղաքային և գեմստօվային բժշկական կազմակերպութիւնների հետ:

Ե Ր Կ Ո Ի Խ Օ Ս Ք

Եթէ մերենան է մարդկութեան համար զարգացման անվերջ աղբիւր, եթէ մերենայի շնորհիւ արդիւնագործութիւնը հրաշքնէր գործեց, ապա դոցա հետ մէկտեղ բանւորի համար նա վշտի ու տանջանքի աղբիւր դարձաւ: Նա բանւորներին զրեց այնպիսի զրութեան մէջ, որ վերջիններս դարձան իրան ստրուկ, տրամադրւեցին գէպի գանազան հիւանդութիւններ, անգամալուծւեցին և հալ ու մաշ եղան:

Որքան էլ որ մենք ապագայի աշխատանքի պայմանները գործարաններում երևակայենք իդեալական, միշտ էլ աշխատանքի մէջ կ'մնայ որոշ չա-

փով ռիսկ, (որեւէ դժբաղդ պատահարի մտքով) կամ ինչպէս ասում են «արհեստակցական ռիսկ»:

Այժմ, երբ ամբողջ արդիւնաբերութիւնը հիմնւած է մրցութեան վերայ, այդ պրօֆէսիօնալ — արհեստակցական ռիսկը շատ մեծ է. այժմ բանւորը շատ աւելի հեշտութեամբ է հիւանդանում, անդամալուծւում և քայքայւում, քան ոչ բանւորը: Աւելի վատթար կ'լինի նորա դրութիւնը, երբ բանւորը անդամալոյծ դառնայ. լաւ կ'լինէր որ նա զոնէ այդ դէպքում ստանար նպաստ կամ կենսաթոշակ: Սակայն շատ անգամ թէև նա անդամալոյծ է դառել, բայց այդ այնքան էլ պարզ չէ, նոյն-իսկ եթէ պարզ էլ է, այնուամենայնիւ նա վերադրւում է «պրօֆէսիօնալ հիւանդութեան» (որի համար գործարանատէրը պարտաւոր չէ վճարել 21 յունիս 1903 թ. օրէնքով), այն ժամանակ բանւորը ոչինչ չի ստանայ:

Սովորաբար նորան հեռացնում են, իսկ մէկ ուրիշ տեղ գտնելն էլ դժւար է, որովհետև ընդունւելու համար քննելով, գտնում են նորան անպէտք: Եւ այդպէս ստացւում է մի ողբերգութիւն: Բայց աւելի սոսկալին այն ժամանակ է հանդէս գալիս, երբ նա մաշւում է և աշխատանքի համար դառնում անընդունակ — ինվալիդ, և ոչ ոք նորան այդ դէպքում չի օգնի:

Այժմ հարց է. ո՞վ է պատասխանատու «պրօֆէսիօնալ ռիսկի» համար: Երկար ժամանակ այն կարծիքին էին, որ ոչ ոք իրաւունք չունի խառնելու աշխատանքի և կապիտալի գործերի մէջ, որ

աշխատաւորն ու բանւորը երկու ազատ կողմեր են: Այդպիսի պայմաններում արդիւնաբերութեան այդ դժբաղդ պատահարների դէմ կարելի էր կռուել երկու-երեք «անապարհներով» ինքնօգնութեամբ կամ մարդասիրութեամբ. վերջինի մասին խօսելն անգամ աւելորդ է:

Այն գործարանատէրերը, որոնք բաց են անում հիւանդանոց-օթևաններ, այն հասարակական հիմնարկութիւնները, որոնք նոյնն են անում, դա միայն օվկիանոսի մի կաթիլն է, միւս կողմից այնպէս է դրւած, որ նա բարեգործւողներին բարոյապէս վիրաւորում է:

Ինչ վերաբերում է ինքնօգնութեան, ապա նա վաղուց արդէն գործում է որպէս հասարակական փոխադարձ օգնութիւն, կամ որպէս որեւէ բանւորական ընկերակցութիւն, որոնց, կառավարութիւնը ամեն օր հալածում է և փակում:

Ինչպէս յայտնի է արհեստակցական ընկերութիւնները միշտ էլ ուշադիր են եղել ապահովելու իենց անդամների առողջութիւնը:

Փոխադարձ օգնութեան այդ ընկերութիւնները ամեն տեղ ձգտել են օգնել դժբաղդ բանւորին բնդունելով զանազան ձևեր. որպէս թաղման ընկերութիւններ, հիւանդութեան դէմ օգնելու ընկերութիւններ և այլն և այլն:

Փոխադարձ օգնութիւնը սակայն անբաւարար է:

Բանւորը ստանում է աննշան աշխատավարձ և անկարող է խնայողութիւն անել, իսկ փոխա-

գարծ օգնութեան ընկերութիւնն էլ ընդգրկում է բանւորների մի աննշան մասը, կենտրոնացնելով իւր գործունէութիւնը դժբաղդ պատահարներից վնասւածների վերայ:

Աշխատելով գործարանում, բանւորն ամեն ռոպէ կարող է ենթարկւել անդամալուծութեան: Ըստ քաղաքացիական օրէնքի, բանւորները կարող են պահանջել գործարանատէրից բաւարարութիւն, բայց դրա համար նրանք պէտք է ապացուցանեն որ մեղաւորը գործարանատէրն է, և ոչ իրանք, այն ինչ պահանջների $\frac{3}{4}$ մասը վերջանում է յօգուտ գործարանատիրոջ . . .

Երբ բանւորական շարժման ազդեցութեամբ ծագեց բանւորական օրէնսդրութիւն, երբ պետութիւնը հարկադրեց փոխել իւր հաշեացքը՝ չխառնել աշխատանքի և դրամազլխի մէջ, կամաց-կամաց սկսեցին հրատարակւել պարտաւորեցուցիչ կանոնադրութիւններ, որոնք գալիս էին ապահովելու բանւորին հիւանդութիւնների և դժբաղդութիւնների դէմ:

Օրէնք ստեղծեց անդամալուծների համար, որպիսին է, օր.՝ 1903 թ. յուլիս 21-ի օրէնքը:

Այդ օրէնքների բուն նպատակն էր, մեղքը փոխադրել բանւորի ուսից ձեռնարկողի վերայ: Առաջինը չպէտք է ապացուցանէր, թէ գործարանատէրը մեղաւոր է, ընդհակառակը, գործարանատէրն աշժմ պէտք է ապացուցանէր, որ դժբաղդութեան մէջ ինքը բանւորն է մեղաւոր, այլապէս նա պատասխանատու էր:

Այդպիսով պրօֆէսիօնայ ռիսկը ստացաւ քաղաքացիական իրաւունք և մեղքը փոխադրեց գործարանի վերայ:

Անդամալուծների վերաբերմամբ հրատարակւած օրէնքը պատճառ գարծաւ մասնաւոր ապահովագրական ընկերութիւնների ծաղելուն: Այդ ընկերութիւնները, որոշ ձեռնարկութեան բանւորներին, ապահովագրում էին և դժբաղդութեան դէպքում վճարում էին որոշ վարձատրութիւն:

Տէրերը գտնելով այդ մասնաւոր ապահովագրութիւնները ոչ այնքան էլ ձեռնտու իրենց համար, սկսեցին կազմակերպել իրանք ևս ապահովագրական ընկերութիւններ, այսինքն, առաջ եկան փոխադարձ-ապահովագրական ընկերութիւններ:

Ինչպէս անդամալուծական օրէնքը, այնպէս և ապահովագրութիւնը բաւարար չէին լիովին լուծելու բանւորին հիւանդութիւնների և դժբաղդութիւնների դէպքում ապահովելու հարցը: Նոքա չէին վերացնում նախկին դժւարութիւնները, չէին ազատում բանւորին տիրոջ սնանկութեան դէպքում, նոքա ընդգրկում էին բանւորների մի աննշան շրջան, և այդ բոլորը հրապարակ նետեց այն միտքը, որ ընդհանրապէս արգիւնաբերութիւնն է մեղաւոր, և ոչ թէ գործարանատէրը կամ բանւորը:

Եւ դա պատճառ գարծաւ պետական պարտադիր ապահովագրութեան առաջ զայլուն:

Պետական ապահովագրութիւն ասելով չպէտք է այնպէս հասկանալ, թէ պետութիւնն է ապահովագրում. ոչ. նա միայն ապահովագրութիւնը հրա-

տարակուժ է պարտադիր և հսկում, որ նա իրա-
գործւի:

Կասկած չկայ, որ պետական ապահովագրու-
թիւնը պարտաւոր է 'ի նկատի առնելու բանւոր
աշխատաւորի կեանքի բոլոր դժբաղդութիւններն,
առանց բացառութեան: Նիւանդութիւններ, դժ-
բաղդ պատահարներ, ինվալիդութիւն, անդորժու-
թիւն, այս բոլոր դէպքերում նա ստանալու է օգ-
նութիւն:

Սակայն մինչև այժմ չկայ մի պետութիւն,
ուր ապահովագրութիւնը լինէր կատարեալ. օրի-
նակ, ոչ մի տեղ չկայ ապահովագրութիւն անդոր-
ժութեան կամ պարապութեան դէմ, մի կողմ թող-
նելով Բելգիայի և Շվեյցարիայի մասնաւոր նախա-
գծերը այդ նկատմամբ:

II.

Պետական ապահովագրութեան միտքը — մեծ
միտք է. և դրա իրագործումը՝ գալիս է պաշտ-
պանելու աշխատանքը, մանաւանդ Ռուսաստանում,
ուր աշխատանքի օրէնսդրական պաշտպանութիւնը
դեռ ևս բաւական անզարգացած է, և ուր արդիւ-
նաբերութեան առողջապահական պայմանները շատ
աւելի վատ են, քան միւս պետութիւններում:

Պետական Իոսմայի առաջ դրւած է երկու
նախագիծ. բանւորի ապահովումը հիւանդութիւ-
նից և դժբաղդ պատահարներից: Ինվալիդական

ապահովագրութիւնից պետութիւնն առ այժմ հրա-
ժարւում է, և չկայ էլ ազատ, լայն արհեստակ-
ցական կազմակերպութիւններ:

1906 թ. դեկտեմբերին Առևտրի և Արդիւնա-
բերութեան մինիստրութեան կից կազմակերպւել
էր «Առանձին Խորհրդակցութիւն», քննելու բան-
ւորական ապահովագրութեան հարցը: Նրա մէջ
մասնակցում էին զանազան մինիստրութիւնների և
հաստատութիւնների 43 ներկայացուցիչներ, 3 հոգի
առանձնապէս հրաւիրւած, իսկ 101 արդիւնաբե-
րութեան ներկայացուցիչներ. բանւորները ներ-
կայացուցիչ չունէին:

1906 թ. դեկտ. 14-ին Խորհրդակցութեան
նիստերը բանալով, նախագահը յայտնեց. «ցանկալի
կլինէր, որ այս ներկայացուցիչներից անկախ (զա-
նազան հաստատութիւնների, արդիւնաբերութեան
և գիտութեան) հրաւիրւէին մասնակցելու նաև
բանւորների ներկայացուցիչները:

Բայց հարկ եղաւ հրաժարւել այդ մտքից,
քանի որ մեղանում չկայ մի կազմակերպութիւն,
արտայայտիչ բոլոր բանւորների ցանկութեան. կան
միայն պատահական խմբակցութիւններ:

Բանւորներին, այդպիսով չհրաւիրեցին, որով-
հետև չկար Ս. շխատանքի ներկայացուց-
չութիւն, չկար Բանւորական Խորհուրդ, թէև
մեղաւորը բանւորները չէին: Եւ փոխանակ դուրս
գալու այդ դժւար կացութիւնից, բանը նորանով
վերջացաւ, որ բանւորներին ուղղակի չհրաւիրեցին...

Այն ինչ նախագիծը բանւորների համար կեն-
սական նշանակութիւն ունէր: Եւ թէ ո՞րքան բան-

ւորները հետաքրքրուում են նորանով, երևում է նոյն իսկ լրագրներից, ուր անընդհատ մէջ է բերուում այս կամ այն արհեստակցական ընկերութեան նախագիծը՝ պետական ապահովագրութեան վերաբերմամբ:

Այդ նախագիծը ընդհանրապէս պէտք է քննելի ամեն տեղ, ուր կան արհեստակցական կազմակերպութիւններ. իսկ այդ քննութիւնները պսակելու է բոլոր բանւորների և միութիւնների ներկայացուցիչների վերջնական քննութեամբ:

Կասկած չկայ, որ լրջօրէն հաւատ ընծայել «նախագծին» չի կարելի: Ամեն ինչ կատարուում է պետութեան մէջ զտնուող իրական (ռէալ) ոյժերի յարաբերութեամբ: Պէտք է զիտակցօրէն կազմակերպել. այն ժամանակ բեռն ինքն ըստ ինքեան կրնինի արդիւնաբերողի և պետութեան վերայ:

Ամենից առաջ, անկասկած, ինչպէս վերևում չիշեցինք, որ գործարաններում զժբաղդ պատահարների պատճառը արհեստակցական ռիսկն է, և այնքան մեծ է այդ ռիսկը, որքան վատ են արդիւնաբերութեան առողջապահական պայմանները:

Պարզ է ուրեմն, որ անդամալուծութեան դէպքում պատասխանատու են ձեռնարկողները՝ գործարանների տէրերը: Ինչ վերաբերում է հիւանդութիւններին, ապա այդտեղ գործում են շատ պատճառներ. մի կողմից՝ մարդկային մարմնին չատուկ է հիւանդանալ, միւս կողմից՝ հիւանդութիւնը կախած է դիրքից, սեռից, հասակից և այլն:

Բայց բանւորներն ուրիշներից աւելի են հիւանդանում. ինչպէս այդ ցոյց է տալիս բժշկական

ստատիստիկան, բանւորները ֆիզիքապէս աւելի վատ են զարգանում, քան ոչ բանւորները: Այդ առանձնապէս աչքի է ընկնում, չատկապէս զինւորակօչութեան ժամանակ: Շվէյցարիայում, օր.՝ զիւղացիներից միջին թւով 100-ից 24 հոգի են անընդունակ ճանաչուում, բանւորներից՝ 39: Մեզանում՝ Ռուսաստանում, զիւղական երիտասարդներից 100-ից 29, իսկ բանւորներից 41:

Անկասկած է ուրեմն, որ գործարանային աշխատանքը աւելի է տրամադրում հիւանդանալու:

Բացի գործարանից, բանւորի առողջութեան վերայ անպայման ազդում են կեանքի և այլ պայմանները: Սպրելով ներքնայարկերում և անկիւններում, սնելով կեղծած մթերքներով, վատ ու արժան հագնելով, բանւորը հեշտութեամբ էլ հիւանդանում է. ո՞վ է, ուրեմն, պատասխանատու բանւորի հիւանդութեան համար:

Պրօֆէսիօնալ հիւանդութիւնների համար անպայման պատասխանատու է գործարանատէրը: Մնացած հիւանդութիւնների դէպքում գործարանային աշխատանքը, չիրաւի, շատ է նպաստում հիւանդանալու, և հետևապէս, հիւանդութեան հոգսը մասամբ ընկնելու է ձեռնարկողի, մասամբ էլ բանւորի վերայ:

Բայց որովհետև բանւորը քրտինք է թափում գործարանատիրոջ համար և ստանում աննշան վարձատրութիւն, միւս կողմից՝ քանի որ ձեռնարկողը հեշտութեամբ իւր զրամական բեռը ձգում է սպառողի վերայ, իսկ բանւորը, ի հարկէ, անկա-

րող է նույնը անելու, ապա կատարելապէս իրա-
 ւացի է, որ հիւանդութեան դէմ ապահովագրելու
 ծախքն էլ ընկնէր ձեռնարկողի վերայ, ինչպէս ան-
 դամալուծութեան դէպքում:

Պէտք է 'ի նկատի ունենալ նաև հետևեալը:
 Մի քանի արհեստակցական ընկերութիւններում,
 քննելով ապահովագրութեան նախագիծը, եկան այս
 եղրակացութեան.

«Ապահովագրութեան բոլոր ծախսերն ընկնե-
 լու են բացառապէս ձեռնարկողների և պետու-
 թեան վերայ, որոնք պէտք է հողան այդ ծախսերը
 կարողութեան, ժառանգութեան և եկամուտի
 պրոգրէսիւ տուրքերով» . . .

Այսպէս ուրեմն, պետական ապահովագրու-
 թիւնը պէտք է բաւարարութիւն տալ բանւորների
 և ընդհանրապէս աշխատաւորների ամենաանհրա-
 ժեշտ կարիքներին. նա պէտք է հատուցանէ բան-
 ւորին այն բոլոր կորուստները, որ նա արնչ է
 ձեռնարկողի կամ արդիւնաբերողի օգտին աշխա-
 տելիս:

Նա պէտք է բանւորին տալ իսկական բժրշ-
 կական օգնութիւն, և հիւանդութեան ժամանակ՝
 բաւարար նպաստ, պէտք է վարձատրէ նորան
 դժբաղդ պատահարներից վնասելիս, և ապահովէ
 ծերութեան օրերում, ինչպէս նաև անգործութեան
 կամ պարապութեան ժամանակ, նաև որբերին և
 այրուն, և նույնպէս բանւոր կնոջը ծննդից առաջ
 և յետոյ:

Ապահովագրութեան տւած օգնութիւնը, միւս

կողմից պէտք է լինի այն չափով, որ այդ որբերն
 ու այրիները, անդամալուծներն ու հիւանդները
 կարողանան տանելի գոյութեամբ ապրել:

Այն ինչ Պետական Դուժալի նախագիծը չի
 պաշտպանում բանւորների կեանքն ու առողջու-
 թիւնը, այլ 'ի նկատի ունի միայն կապիտալի
 շահերը:

Միւս կողմից պէտք է լինի, գոնէ, արհես-
 տակցական կազմակերպութիւնների կատարեալ
 ազատութիւն: Սարսափելի են այն պայմանները,
 որոնք անհնար են դարձնում լուծելու սօցիալական
 հարցերը խաղաղ ճանապարհով, իսկ հայաճանքով
 ոչինչ չի կարելի անել:

Բանւորական արհեստակցական կազմակերպու-
 թիւններից զատ, պէտք է պաշտպանութիւն գտնի
 և ապահովի իւր շահերի և իրաւունքի տեսակէտից
 նաև բազմաթիւ առևտրա-արդիւնաբերական ծա-
 աւոյողների բազմանդամ դասակարգը:

Ցանկալի է, որ մեր երկիրը գոնէ ծածկի զա-
 նադան կարգի կօօպերացիայի խիտ ցանցերով,
 որոնք շատ ու շատ բարիքներ կարող են մատա-
 կարարել դժբաղդ աշխատաւորին:

Մեզանում, աշխատաւոր դասակարգի կեանքում
 կօօպերացիան չափազանց արդիւնաւոր և կարևոր
 դեր ունի կատարելու: Նա պէտք է ազատէ նորան
 զանազան տեսակի կեչիքիչների և վաշխառուների
 ճանկերից, որոնք երկար ժամանակից 'ի վեր ծծում
 են անխղճօրէն նորա արիւնը: Կօօպերացիայի մի-
 շոցով միայն զիւղական և քաղաքային աշխատա-

ւորները կարող են ազատել ամեն տեսակի մանր խանութպանների ձեռքից, որոնք նոցա խաբում են աչ ու ձախ, արշինի և կշեռքի մէջ, վատ ու չնչին ապրանքը լաւի տեղ տալով և շատ թանգ ծախելով:

Փոխատու-խնայողական և վարկային ընկերութիւնները կարիք ունեցող գիւղացիներին բարեխիղճ տոկոսով պարտք տալով, կազատեն նոցա վաշխառուների ծանր լծից:

Գիւղատնտեսական ընկերութիւնները գիւղացուն զործիք ու նիւթ մատակարարելով, նորա տնտեսութեան մնացորդը արտահանելով, հրապակից դուրս կ'ըջեն միջնորդ-ընողներին:

Որքան էլ որ աարբեր լինեն այս բոլոր կօօպերատիւ ընկերութիւնների գործունէութիւնն ու կազմակերպութիւնը, այնուամենայնիւ նոքա ունին մի ընդհանուր կապ, որը նոցա միշտ մօտ կ'պահէ. — նոքա բոլորն էլ ձգտում են ազատելու աշխատանքը կապիտալի անողոք ճանկերից:

Կազմակերպւեցէ՛ք ուրեմն, ինչպէս սպառող, արդիւնաբերող, և ինչպէս ընտրող ու քաղաքացի, յանուն աշխատանքի ազատութեան, յանուն նոր կեանքի:

ԲԺ. Ա. Բ.

Սպառողական ընկերութիւնը՝ կօօպերացիան, սա սպառողների ինքնօգնութեան և ինքնապաշտպանութեան միութիւնն է:

Կօօպերացիան միշտ է տալիս միացած ուժերով հաշթաշթել ամենաանհրաժեշտ առարկաները և առիթ եղած դէպքում մինչև իսկ արդիւնաբերել այն:

Սպառողական ընկերութիւնը սպառողին մատակարարում է թարմ ապրանք և պաշտպանում է նրան կեղծած ու թունաւորող մթերքներից:

Նա վարժեցնում է սպառողին կանխիկ առևտրի:

Կօօպերացիան հոգ է տանում իւր անդամների մտաւոր սննդի մասին՝ բացում է մանկապարտէզներ, ուսումնարաններ, դասընթացներ, արհեստանոցներ, ջուրհականոցներ, ժողովրդական տներ, թատրոններ, գրադարան-ընթերցարաններ և այլն. — բարձրացնում է գիւղատնտեսական տեխնիկան, բացի այդ հիմնում է բանկեր, հողեր է դնում և այլն և այլն:

Կօօպերացիան օգնութեան է հասնում հիւանդութեան, ծերութեան ու գործազրկութեան դէպքերում և կարող է ինվալիդին կենսաթոշակ տալ:

Կամենալ՝ նշանակում է կարողանալ. փորձէնք, ասում է կօօպերացիան, և մենք հարծտահարութեան և խաբերալութեան այս աշխարհը կզարձենք արգարութեան և եղբայրութեան մի նոր երկիր:

44 165

« Ազգային գրադարան



NL0212794

ПУШКИНСКАЯ СКОРОПЕЧАТНЯ
С.-Петербургъ, Сайкинъ пер. 10

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.